

# ՏԵՂԵԿԱՏՈՒ

DIEGHIEGAIDOU

ديقچادو

Հրատարակողն Գաղիբեյի Հ.Բ.Բ.Մ.Ի

نظرة جمعية القاهرة الخيرية الأرمنية العامة



Ohan Janikian

**ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 96ՐԿ ՏԱՐԵԼԻՑ  
ՆԱՀԱՏԱԿԱՑ ՅԻՇԱՏԱԿԻ ՄԵՆԱՀԱՄԵՐԳ  
ԳԷՈՐԳ ՀԱՃԵԱՆ**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	<b>Պատմության Դարձող Ներկան</b>	<b>1</b>
	<i>Շաքե Մարգարեան</i>	
	<b>Սրբոց Վարդանանց Տօնը Գահիրեի Մէջ</b>	<b>2</b>
	<i>Շաքե Մարգարեան</i>	
	<b>Ապրիլ 24 2011 Հայերու 96ամեայ Յարութիւնը</b>	<b>4</b>
	<i>Շաքե Մարգարեան</i>	
<b>ԽՍՐԱԳԻՐ</b> Արաքսի Տօվլէթեան	<b>Հայոց Ցեղասպանութեան 96րդ Տարելիցին Գեորգ Հաճեանի Նահատակաց Յիշատակի Բացառիկ Մենահամերգը Գահիրեի Մէջ</b>	<b>6</b>
	<i>Միհրան Ղազէլեան</i>	
<b>ՓՈԽ ԽՍՐԱԳԻՐ</b> Շաքե Մարգարեան	<b>Մայր, Մայրութիւն . . . Մայրերու օր . . .</b>	<b>11</b>
	<i>Շաքե Մարգարեան</i>	
<b>ԽՍՐԱԳՐՈՒԹԵԱՆ</b> <b>ԽՈՐՀՐԴԱՏՈՒ</b> Պերճ Թերզեան	<b>Կիրակի, 24 Ապրիլ 2011 Սուրբ Յարութեան Տօն եւ Ս. Սահակ - Ս. Մեսրոպ Շքանշանի Տուգութիւն</b>	<b>12</b>
	<i>Արաքսի Տօվլէթեան</i>	
<b>ՍՐԱԳՐԻՉ</b> <b>ՎԵՐՍՏՈՒԳԻՉ</b> Անայիս Ճիզմէճեան	<b>Մահ Գահիրեի Թեմական Ժողովի Ատենապետ՝ Տիար Անդրանիկ Մեսրոպեանի</b>	<b>18</b>
	<i>Արաքսի Տօվլէթեան</i>	
<b>ԳԵՂԱՐՈՒԵՏԱԿԱՆ</b> <b>ՁԵՒԱՌՐՈՒՄ</b> Շահէ Լուսարարեան	<b>Արա Սիմսար, Նամականիշերու Անուշ Մեղեդին</b>	<b>20</b>
	<i>Թրգմ. Ա.Ը</i>	
	<b>Իրան Կը Պատուէ Առաջին Կին Աստղագետ, Բնագիտութեան Փրոֆեսոր՝ Ալէնուշ Տերեանը</b>	<b>22</b>
	<i>«Տ»</i>	
<b>ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ</b> <b>ՇԱՐՈՒԾՔ</b> Գարովին Հէշեմա Արփի Խաչերեան	<b>Մեծ Եղեռնի Ոգեկոչում ՀԲԸՄ-ի Սաթենիկ Զագըր Մշակութային Կեդրոնին Մէջ</b>	<b>23</b>
	<i>Թրգմ. Ա.Ը</i>	
	<b>Յաւելեալ Տեղեկութիւններ ՀԲԸՄ-ի Սաթենիկ Զագըր Մշակութային Կեդրոնին մէջ ցուցողուած Ժապաւեններուն մասին</b>	<b>24</b>
	<i>Պատրաստեց Արփի Խաչերեան</i>	
<b>ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ</b> Nubar Printing House	<b>ՀԲԸՄ-ի Երկու Վարժարաններ Կիրազործեն Միութեան Հաստատած Աշակերտական Փոխանակման Ծրագիրը</b>	<b>26</b>
	<b>Գահիրեի ՀԲԸՄ Նուպարի 12 Տարեկանէն Վար Տղոց Ֆութպոլի Խումբը Կը Մասնակցի ՀԲԸՄ -Արարատի Եւ Ս. Թերեզայի Մրցաշարքերուն</b>	<b>27</b>
	<i>Թրգմ. Ա.Ը</i>	
	<b>Գահիրեի ՀԲԸՄ ՆՈՒՊԱՐԻ Կազմակերպած Գնդամուղի 10րդ Մրցաշարքը</b>	<b>28</b>
	<i>Թրգմ. Ա.Ը</i>	
<b>ԹԻՒ 59 Նոր Շրջան</b> <b>ԱՊՐԻԼ 2011</b>	<b>Անդամական</b>	



# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԴԱՐՁՈՂ ՆԵՐԿԱՆ



Համաշխարհային հանրութիւնը Յուն-լար ամսուան ընթացքին ակնդետ հետեւեցաւ նախ Թունուզի, ապա Եգիպտոսի մէջ բռնկած զանգուածային ապստամբութեանց:

Գահիրէի, ինչպէս նաեւ այլ քաղաքներու մէջ, զարմանալի կարգապահ եւ մասամբ անխռով մթնոլորտի մը մէջ ընթացող ցոյցերով, ժողովուրդը կը պահանջէր նախագահ Հոսնի Մուպարաքի հրաժարականը:

Մենք ականատես եղանք նոր ոճի յեղափոխութեան մը՝ առանց առաջնորդի, առանց կազմակերպութեան, սակայն ամեն դասակարգի եւ կրօնքի պատկանող մարդոց մասնակցութեամբ:

Վերջապէս, Փետրուար 11-ին, յեղափոխութեան 18-րդ՝ ճակատագրական օրը, իր հրաժարականը տուաւ Նախագահ Մուպարաք, եւ երկրին ղեկավարութիւնը (6 ամսուան համար) ստանձնեց Չինեալ Ուժերու Գերագոյն Խորհուրդը:

Եգիպտացիներու յաղթանակն ու խանդավառութիւնը լսելի եղաւ արտաքին աշխարհին, որ ողջունելով նախագահին հրաժարումը «Զաջութիւն պահանջող Զայլ մը» որակեց զայն:

Այո՛, Յունուար 25-ի երիտասարդական

յեղափոխութիւնը նուաճեց իր առաջին կարեւոր յաղթանակը, սակայն բաւականին դժուար եւ հարցականներով լեցուն է երկրորդ հանգրուանը՝ յեղափոխութեան առաջադրած բարենորոգութիւնները, ինչպէս նաեւ խորհրդարանական եւ նախագահական ընտրութիւնները բարեյաջող կերպով իրագործելու հանգրուանը:

Այդ շրջանին, հակառակ անոր որ եգիպտահայութեան սպառնացող վտանգ չկար, սակայն դադրած էր առօրեայ կեանքին բնականոն ընթացքը: Փակ էին դպրոցներն ու ակումբները:

Ներկայիս կեանքը վերադարձած է իր բնականոն ընթացքին. բաբախել սկսած է նաեւ հայութեան զարկերակը: Սակայն, տակաւին մասնակի ցոյցեր կը շարունակուին ինչպէս Գահիրէի, այնպէս ալ երկրի տարբեր քաղաքներուն մէջ՝ տարբեր պահանջներով (աշխատավարձերու բարձրացում, աշխատանքի պայմաններու բարելաւում, առողջապահական հոգատարութիւն եւ այլն):

Որքան ալ լաւատես ըլլանք, չենք կրնար ճշգրտօրէն նախատեսել երկրին ապագան:

Շաքէ Մարգարեան



## ՄՐՔՈՑ ՎԱՐՂԱՆԱՆՑ ՏՕՆԸ ԳՎՃԻՐԷԻ ՄԷՋ

Դարեր շարունակ մեր ժողովուրդը յարատևած է իր աննկուն հաւատքով եւ հոգիին զօրութեամբ. հոգեւորը եղած է այն վէմը, որուն վրայ հաստատուն մնացած են մեր ինքնութիւնն ու ազգային ինքնագիտակցութիւնը, մայրենին ու մշակոյթը:

Մեր ազգը յարատևած է նաեւ այդ հաւատքին ու նուիրական գաղափարներուն համար անմահացած հերոս Նահատակներուն եւ Մարտիրոսներուն թափած արեամբ ու քաջագործութեամբ:

Այդպիսի հերոս նահատակներէն Սրբոց Վարդանանց զօրավարաց յիշատակը հանդիսաւոր կերպով նշուեցաւ Զինգշաբթի, 3 Մարտ 2011-ին Գահիրէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Տաճարին մէջ:

Ս. Վարդանանց 1560-ամեակին նշուելու Սուրբ եւ Ամմահ Պատարագը մատուցեց Զոգեւոր Զովի Արժ. Տ. Յակոբ Քիւնյ. Յակոբեան, որ օրուան խորհուրդը փոխանցելով, իր պատգամն ու օրհնութիւնը յղեց ներկաներուն: Ան Վարդանանցը որակեց որպէս քրիստոնէութեան ամրապնդման եւ հայ մարդու հոգւոյն արիւթեան մարմնացում, ըսելով որ հայ ժողովուրդը 15 դար շարունակ հաւատարմօրէն կը նշէ Վարդանանց տօնը, որովհետեւ հերոս եւ հայրենասէր Վարդան Մամիկոնեանի կերպարին մէջ իր նորօրեայ պայքարին կատարելագործուած մարմնացումը կը գտնէ:

Զոգեւոր հայրը շեշտեց, թէ Վարդանանց աննկուն հաւատքն ու ոգին էր, որ մեր հայրենիքը անսասան պահեց, մեր ժողովուրդի միասնութիւնը ամրապնդեց եւ մեր ազգին յաւերժութիւնը երաշխաւորեց:

«Վարդանանցը չէ աւարտած. ան երէկ էր, այսօր է եւ տակաւին կը շարունակուի», - ըսաւ ան եւ զուգահեռներ կատարեց Վարդանանցի, Սարտարապատի ու Արցախեան հերոսամարտերու եւ Յեղասպանութեան ճանաչման համար տարուող պայքարներուն միջեւ: Ան ըսաւ, որ հայութիւնը, ի մասնաւորի Սփիւռքի մէջ, կը գտնուի Վարդանանց ամենօրեայ գոյապայքար

մղելու մարտահրաւերին դիմաց՝ յանուն մեր լեզուին ու հաւատքին եւ ազգային մեր արժէքներուն:

Այս հոգեւոր հայրը տեղեկացուց, որ Ս. Վարդանանց Չօրավարաց յիշատակութեան օրը, Զայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին կը նշէ նաեւ Գարեգին Բ. Ամենայն Զայոց Կաթողիկոսի անուանակոչութեան տօնը: Այս առիթով պատարագիչը Զայրապետական Մաղթանք յղեց եւ աղօթք բարձրացուց առ Աստուած՝ Ամենայն Զայոց Կաթողիկոսի առողջութեան ու խաղաղ հայրապետութեան համար:

Յետոյ ան, շնորհաւորելով բոլոր անոնց, որոնք Վարդանանց հերոսամարտի քաջ նահատակներու անունները կը կրեն, մաղթեց որ Վարդանանց նուիրական ոգին երբեք չնուագի մեր ազգին մէջ՝ ի պաշտպանութիւն մեր հայրենիքին եւ սուրբ հաւատքին:

Այս եկեղեցւոյ «Լուսաւորիչ» երգչախումբը (ղեկավարութեամբ խմբավար Միհրան Ղազելեանի, երգեհոնահարութեամբ օրիորդ Արփի Ճանիկեանի) եւ ներկայ ժողովուրդը միասնաբար կատարեցին Վարդանանց նուիրուած երգեր, ինչպէս նաեւ հատուածներ ընթերցուեցան պատմագիր, Վարդանանց հերոսամարտի ակաւատես ու մասնակից Եղիշէի «Վարդանանց Պատերազմ»-էն:

Դարձեալ Աւարայրի Ճակատամարտի 1560-ամեակին առթիւ՝ Զինգշաբթի, 17 Մարտ 2011-ին, «Պըլըքտանեան» հանդիսասրահին մէջ, տեղի ունեցաւ Վարդանանց հերոսներու անմեռ յիշատակին նուիրուած համերգ-ձօնը:

Զամերգը կազմակերպած էր Գահիրէի Ազգային Առաջնորդարանը, հովանաւորութեամբ Եգիպտոսի Զայոց Բարեխնամ Առաջնորդ Գերշ. Տ. Աշոտ Սրբ. Եպիսկոպոս Մնացականեանի:

Գլխաւորութեամբ Առաջնորդ Սրբազան Զօր, պատգամ-երկոյթին ներկայ էին Սուտանի հոգեւոր հովիւ Զոգշ. Տ. Գաբրիէլ



Ohan Janikian

Աբեղայ Սարգսեան, Գահիրէի հոգեւոր Զովի Արժ. Տ. Յակոբ Զինյ. Յակոբեան, Ազգային Իշխանութեան անդամներ եւ արւեստասէր հասարակութիւն մը:

Յայտագրին իրենց մասնակցութիւնը բերին Գահիրէի Ազգային Առաջնորդարանի «Արաքս» երգչախումբը՝ նուագակցութեամբ դաշնակահար Զայկ Աւագեանի, ինչպէս նաեւ ԶԲԸՄիութեան «Ծիածան» մանկական եւ Յուսաբեր Մշակութային Ընկերակցութեան «Ծաղկաստան» երգչախումբերը միացեալ կատարումով: Այս երգչախումբերուն նուագակցողներն էին դաշնակահարուհիներ Նաւօր Աբիկեան եւ Արփի Ճանիկեան, իսկ համերգին գեղարուեստական ղեկավարն ու երգչախումբերու խմբավարն էր Միհրան Ղազէլեան:

Չափազանց յուզիչ էր մանկական մատղաշ շուրթերէն լսել հայրենասիրական անմահ երգեր (Քաջ Չօրավար, Ողբերգ-Ուղերձ, իմ Որբիկին՝ մեներգեց Գոհար Վարդանեան, Գողթնի Քնարք եւ ի Չէն), կատարուած մանկական մաքուր ու ոգեշնչող հարազատութեամբ:

Այս ելոյթ ունեցաւ «Արաքս» երգչախումբը՝ ներկայացնելով 15 ստեղծագործութիւններ, որոնց մէջ ընդգրկուած էին ինչպէս հանրածանօթ եւ սիրուած, այնպէս ալ անյայտ հեղինակներու գրեթէ մոռացութեան մատնուած եւ մեր գաղութին մէջ

առաջին անգամ հնչող երգեր:

Կատարուած երգերն էին. «Երգ Քաջին Վարդանայ», «Կարմիր Վարդան» (Բ տարբերակ), «Նորահրաշ», «Երգ Մեռնող Զայրենասերի», «Լռեց» (մենակատար՝ Արա Զեօհնէլեան), «Պլպուլն Աւարայրի», «Յիմի Է՞լ Լռեմք», «Ո՛վ Զայկագունք» (մենակատար՝ Ռուբէն Սաատ), «Թէ իմ Զայրենեաց», «Մեր Նախնիքը» եւ «Քայլերգ Շաւարշանի»:

Մեներգներով հանդես եկան Ռուբէն Սաատ «Բամբ Որոտան», Սերճ ՍետեՖճեան «Կարմիր Վարդան», (Ա տարբերակ), Սիլվա Թերզիպաշեան «Ննջեա՛, Վարդան», Մկրտիչ Աւետանեան «Զայ Աշխարհ»:

Բոլորն ալ իրենց երգերով ներկաները հաղորդակից դարձուցին այդ ճակատագրական ու պատմական իրադարձութեանց:



Ohan Janikian

Զանդեսին համար կազմուած յայտագիր-գրքոյկը կը ներառէր յայտագրին բոլոր երգերուն բառերը, Երուանդ Օտեանի «Վարդանանց Տօնը» գրութիւնը եւ Վահան Թէքեանի «Խորհուրդ Վարդանանց» հրաշալի բանաստեղծութիւնը:

Գնահատելի ձեռնարկ մը, որուն համար սրտանց կը շնորհաւորենք բոլոր կազմակերպիչները:

Շաքէ Մարգարեան



## ԱՊՐԻԼ 24 2011 ՀԱՅԵՐՈՒՄ ԳՅԱՄԵԱՅ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ



Ohan Janikian

Չուզադիպութիւններ կան որ ճիշդ ժամանակին կու գան. ինչպէս այս տարի նախախնամութեան կամքով զուգադիպեցան Յիսուս Զրիստոսի Յարութեան՝ Ս.Չատիկի տօնը եւ Հայոց Տեղասպանութեան յիշատակութեան օրը:

Խորքին մէջ այս երկուքը կը նոյնանան իրենց իմաստներով ահաւոր տանջանքներ կրած անմեղ նահատակ-նահատակներ, ապա Աստուծոյ կամքով եւ հրաշքով յարութիւն առնող վերապրողներ ու յարատեւող (ներ):

Յիսուս Զրիստոսի յարութենէն յետոյ, Անոր անունն ու կրօնը ճիւղեր տալով՝ բազմացաւ ու տարածուեցաւ ամբողջ աշխարհի տարածքին: Հայոց Ազգն ալ, որ ըստ սելծրագիրի պիտի ի սպառ ոչնչացուէր եւ «մէկ հայ պիտի մնար միայն, այն ալ թանգարանին մէջ պահելու համար», Աստուծոյ եւ Զրիստոսի հաւատքով լեցուն՝ առասպելական փիւնիկի պէս յարութիւն առաւ, գոյատեւե՛ց, բազմացա՛ւ ու տարածուեցա՛ւ, արմատներ նետելով աշխարհի չորս ծագերը:

Այդ երկու օրերու նմանութիւնը ա՛լ ակելի



Ohan Janikian



Ohan Janikian



Ohan Janikian

ընդգծուեցաւ Ուրբաթ, 22 Ապրիլ 2011-ին, երբ Զրիստոսի «Թաղման Կարգ»-էն ետք Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ հոգեհանգստեան

մասնաւոր պատարագ մատուցուեցաւ Զայոց Տեղասպանութեան զոհ գացած մեր բիրաւոր նահատակներուն հոգւոն ի հանգիստ:

Ս.Պատարագը մատոյց Թեմիս Բարեխամ Առաջնորդ Գերշ. Ս. Աշոտ Ս. Եպիսկոպոս Մնացականեան:

Պատարագէն ետք ծաղիկներ զետեղուեցան եկեղեցւոյ՝ մեր նահատակներուն նուիրած Մատուռին մէջ եւ խաչքարին առջեւ, ուր Սրբազան Զայրը իր խօսքին մէջ ըսաւ.

«Մենք մեր ազգային ընդհանրական կեանքին մէջ բազում օրինակներ ունինք, որոնք կը նմանին մեր Տիրոջ ապրած երկրային վերջին օրերուն. չարչարանքներ տեսած ենք, հալածանքներ կրած ենք . . .

Իսկ այսօր, այդ նմանութիւնը արժեւորելու եւ ճիշդ գնահատելու առիթն է՝ աղօթք բարձրացնելու առ Աստուած, իր Միածին Որդին չարչարանակից 1.5 մլն.մեր նահատակներուն հոգիներուն խաղաղութեան եւ փրկութեան համար»:

Ապա, Սրբազան Զայրը նշեց որ մեր նահատակները անժամանակ զրկուեցան իրենց կեանքերէն եւ չկրցան կեանքի կոչել իրենց նպատակները, ուստի մենք պարտաւոր ենք իրագործել ազգային մեր ընդհանրական երազանքը, որ է. «**ՀԱՅ ԱՊՐԻԼ.ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱՊՐԻԼ.ԱՉԳԸ, ՀԱՅՐԵՆԻՔԸ ԵՒ ՀԱՅԸ ՍԻՐԵԼՈՎ ԱՊՐԻԼ ՄԵՐ ՊԱՅՔԱՐԸ ՅԱՂԹՈՒԹԵԱՄԲ ՏՕՆԵԼՈՒ ՀԱՄՈՉՈՒՄՈՎ ԱՊՐԻԼ**»:

Թող օրինեալ ըլլայ անոնց յիշատակը եւ թող Յիսուս Զրիստոս մշտապէս լոյսերու եւ հանգստութեան մէջ պահէ անոնց հոգիները»:

Իսկ Կիրակի 24 Ապրիլի երեկոյեան Գահիրէի Ազգային Իշխանութեան Սրբազան

Յոր գլխաւորութեամբ կազմակերպած մեծ եղեռնի 96-րդ ամեակին նուիրած յիշատակի մենահամերգը տեղի ունեցաւ Զելիոպոլսոյ Պըլըքտանեան հանդիսասրահին մէջ:



Ohan Janikian

Հայաստանէն այս առիթով հրաւիրուած տաղանդաւոր երգիչ Գեորգ Զաճեանի համերգէն առաջ, Գահիրէի Քաղաքական Ժողովի անդամ Տիար Շահէն Մազլումեան հակիրճ ելոյթով մը կատարեց օրուան հանդիսութեան բացումը, որմէ ետք ՀՀ Արտակարգ եւ լիազօր Դեսպան Տոքթ. Արմէն Մելքոնեան իր օրուան պատշաճ բովանդակալից ելոյթին ընթացքին ի միջի այլոց անդրադարձաւ Թուրքիոյ կառավարութեան հայոց ցեղասպանութիւնը ժխտելու համար տարած պայքարին ու կատարած բազմաթիւ կեղծիքներուն, ցեղասպանութեան միջազգային ճանաչման եւ Դատապարտման գործընթացը կասեցնելու համար օգտագործած բոլոր հնարաւոր միջոցներուն եւ այլն:

Ապա յարգարժան Դեսպանը իր խօսքը աւարտեց մէքերելով ՀՀ Նախագահ Ն.Գ. Սերժ Սարգսեանի «Ցեղասպանութիւն, Դատապարտում, Կանխարգելում, հետեւանքների վերացում» գիտաժողովին ունեցած ելոյթէն հետեւեալը: «Մեծ եղեռնի մօտալուտ հարիւրամեայ տարելիցի նախաշեմին, խոնարհուելով մեր անմեղ զոհերի առջեւ, մենք որպէս ցեղասպանութիւն ապրած ժողովուրդ, շարունակելու ենք հնչեցնել բոլորին ուղղուած մեր ուղերձն ու ահազանգը, հանուն ողջ մարդկութեան եւ քաղաքակիրթ աշխարհի, մենք պարտաւոր ենք գերծ պահել մեր մոլորակը նման համամարդկային աղետներից:

Շաքէ Մարգարեան

Ծ.Խ. Օրուան բացառիկ երգահանդեսին մասին կարդալ Մօ. Միհրան Ղազէլեանի յօդուածը:



## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 96ՐԳ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԳԷՈՐԳ ՀԱՃԵԱՆԻ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՅԻՇԱՏԱԿԻ ԲԱՑԱՌԻԿ ՄԵՆԱՀԱՄԵՐԳԸ ԳԱՀԻՐԷԻ ՄԷՋ



Ohan Janikian

Ապրիլեան ձեռնարկները, կազմակերպւած ի յիշատակ Հայոց Ցեղասպանութեան, ոգեկոչման իրենց այլազան ձեւերով, գեղարւեստական դրսեւորումներով, պատմական անդրադարձերով եւ քաղաքական յայտարարութիւններով անքակտելի մասն են հայաստանեան եւ սփիւռքեան իրականութեան: Բայց ազգային ողբերգութեան տարողութեան, անամոքելի ցաւի ու կորուստի տուայտանքը ու վերջնական արդարահատոյցի նկատմամբ անյուսահատ պայքարի հաւատարմութիւնը, որպէս արդարատենջ հայ մարդու «երդում-պատգամ», առաւելագոյն յուզականութիւն եւ կենսոյժ կը փոխանցեն ունկնդրի սրտին, երբ կ'արտայայտուին բարձր արուեստի միջոցով, հնչող արուեստի միջոցով, երգի միջոցով:

Ահա այս գիտակցութեամբ է, որ Գահիրէի Ազգային Իշխանութիւնը Առաջնորդ Սրբազան Հօր գլխաւորութեամբ նախաձեռնեց ու կազմակերպեց այս տարուայ Ապրիլ 24-եան սգահանդէսը՝ յատկապէս Հայաստանէն հրաւիրելով երիտասարդ, տաղանդաւոր երգիչ Գէորգ Հաճեանը: Առ այդ՝ անհրաժեշտ է եւ նախաձեռնող եւ կազմակերպող եւ ելոյթ ունեցող եռեակ կողմերուն անկեղծ գնահատանքով արժանին մատուցել: Արդարեւ, բոլորովին ալ յաճախ չէ, որ առիթը կ'ունենանք մեր համայնքային բեմերէն ունկնդիրը ըլլալ արհեստավարժ երաժիշտներու ելոյթներուն: Այս անգամ այդ երաժիշտները սփիւռքեան տաղանդաւոր ուժերէն էին. մէկը լիբանանեան ասպնջական հողի ծնունդ, երգիչ՝ Գէորգ Հաճեան (ան վեց տարի է, որ տեղափո-





խուած է Հայաստան՝ մշտական բնակութեան) իսկ միւսը՝ մեր համայնքի զաւակ դաշնակահար-երաժշտագէտ Հայկ Աւագեան: Երկու արուեստագէտներն ալ իրենց երաժշտական բարձրագոյն կրթութիւնը ստացած են Երեւանի Կոմիտասի անուան երաժշտանոցին մէջ:

Հայկ Աւագեան հայ եւ եգիպտացի երաժշտասէր հանրութեան լաւապէս ծանօթ իր գործի այն նուիրեալներէն է, որ իր տարողունակ երաժշտական կարողութիւնները հաւասարապէս կ'իրացնէ թէ՛ դաշնամուրային կատարողութեան, թէ՛ երգչախմբավարութեան, թէ՛ երաժշտագիտութեան եւ թէ՛ երաժշտահրատարակչական ասպարէզներուն մէջ: Մինչդէռ Գէորգ Հաճեան մեր գաղութի համար բացայայտում մը պիտի ըլլար իր անդրանիկ ելոյթով:

Եւ ահա եկաւ պահը յիշատակի հանդիսութեան գեղարուեստական բաժնին: Երեկոյթի բեմայարդարման մտայղացումը այնքան տիրական էր եւ միաժամանակ այնքան անպաճոյճ, որ վարագոյրը բացուելուն պէս մենք բոլորս մեզ գտանք Ծիծեռնակաբերդի անմար կրակին դիմաց կարծես անմիջականօրէն, ուր դաշնակը «տեղադրուած էր» յուշարձանի խոնարհուած սիւնաշարին տակ, իսկ անմար կրակը երիզուած իրական ութարմ ծաղիկներով: Պատկերի եւ իրականութեան այս համատեղումը այնքան համահունչ էր օրուայ խորհուրդին եւ այնքան ազդեցիկ միեւնոյն ատեն, որ ոչ ոք անտարբեր թողուց ներկաներէն:

Քիչ անց գոյգ արուեստագէտները «մուտք գործեցին յուշարձանի տիրոյթ»: Հաճեան իր ելոյթի առաջին իսկ հնչիւններով մագնիսացուց հանդիսատեսը, որ այդ երեկոյ լեցուցած էր «Պըլըքտանեան» հադիսասրահը բերնէբերան: Անոր սքանչելի թենոր ձայնը ծաւալեցաւ նոյն համեմատութեամբ ողողելով հանդիսասրահը ծայրէ ի ծայր:

Համերգի առաջին իսկ հնչիւններէն մինչեւ եզրափակիչ հնչիւնը բեմին վրայ կ'իշխէր երգիչ-դաշնակահար գոյգ արուեստագէտներու բեմական-կատարողական եւ գեղագիտական սկզբունքներու կատարեալ ներդաշնակութիւն մը, որ համերգի յաջողութեան մեծագոյն գրաւականներէն էր:

Ապրիլ 24-եան յիշատակի այս տարուայ

սգատօնը կը զուգադիպէր Քրիստոսի հրաշափառ Յարութեան Տօնին: Եւ համայն հայութիւնը յարութեանական անգերազանցելի ուրախութիւնը խառնած Ապրիլ քսանչորսեան անմխիթարելի տխրութեան, ամենուր նախ կը սգար իր մարդկային անվերականգնելի կորուստներն ու իր բնօրրանէն մեր ժողովուրդի մեծագոյն հայրենապարպումը, ապա վերստին կ'արժեւորէր մեր փրկուած ժառանգութիւնը, եւ Քրիստոսի յարութեան հետ կը տօնախմբէր մեր իսկ ժողովուրդի յարութիւնը: Այս տրամաբանութեամբ է, որ Հաճեան կազմած էր օրուայ երգացանկը՝ յայտագրի Ա. բաժինը յատկացնելով հոգեւոր երաժշտութեան, իսկ Բ. բաժինը՝ աշխարհիկին:

Այնչափ խորհրդանշական էր եւ նոյնքան տպաւորիչ, որ յայտագրի առաջին կատարումը Կոմիտաս Վարդապետի երգ-աղօթք-ողոքումն էր՝ այսպէս կոչուած մանկական «ՀԱՅՐ ՄԵՐ»-ը, որ տարաբախտ Վարդապետի վերջին ստեղծագործութիւնն է՝ գրուած Ապրիլ 24-եան իր տարագրութենէ վերադարձէն քանի մը շաբաթ անց՝ Յուլիսին, երգաղաչանք մը, որով անձիտուած ժողովուրդի անմխիթար Հայր Սուրբը եւ միաժամանակ նոյնքան անմխիթար Ջաւակ Սուրբը Աստուծոյ պահապան աջ եւ շնորհ կ'աղերսէ հայ մանուկին եւ անոր ծնողաց համար հայ մանուկի իսկ շուրթերով:

Ընդհանրապէս յայտագրի երգացանկը կազմուած էր կատարող-արհեստավարժի մեծագոյն բժախնդրութեամբ եւ գիտակցութեամբ՝ նկատի ունենալով օրուան խորհուրդը եւ միաժամանակ առանց գայթակղելու երաժշտական աժան «ամբոխավարութենէ»...

«ՀԱՅՐ ՄԵՐ»-ին յաջորդեց առ Աստուած Աստուածամօր բարեխօսութեան խորապէս մարդկային եւ յայտնապէս անգերազանցելի մէկ երգ-աղերսը՝ շուպերթեան հանրայայտ «ԱԻՒ ՄԱՐԻԱՆ», որ Հաճեան կատարեց որքան աղաչական, նոյնքան ալ վսեմաշուք շեշտով մը, մինչ Աւագեանի ստեղնաշարը տասներկու ութերորդի շուպերթեան կշռոյթով, ապաշխարանքի մեղմ անձրեւով կարծես կը թակէր ունկնդիր սրտերը:

Նոյնքան վեհ ու գեղեցիկ էր Ֆրանք Սեզարի իր պարզութեամբ եւ միաժամանակ



կատարելութեամբ փշաքաղող, երկնամերձ «ՓԱՆԻՍ ԱՆՃԵԼԻՔՈՒՄ»-ի (ՀԱՅ ՀՐԵՇՏԱԿԱՑ-ի) հաճեանական կատարումը:

Վերադառնալով երաժշտական հայաշխարհ՝ յաջորդաբար հնչեցին միջնադարեան յայտնի եւ սիրուած հոգեւոր երգեր ու տաղեր. «Ո՞ՒՐ ԵՍ ՄԱՅՐ ԻՄ»-ը, «ՏԵՐ ՈՂՈՐՍԵԱ ՍՏԵՂԾՈՂ ՄԱՆԿԱՆՑ»-ն եւ «Ի ԳԵՐԵՉՄԱՆ»-ը՝ Դանիէլ Երաժիշտի մշակմամբ եւ «ՅԱՐԵԱԼ ՔՐԻՍՏՈՍ»-ն ու «ՎԱՐԱՆԻՄ Ի ՄԵՂԱՑ»-ը Ջարեհ Արքեպիսկոպոս Ազնաւորեանի մշակմամբ:

Տարուայ մէջ մէկ անգամ, միայն Աւագ Հինգշաբթի Խաւարման արարողութեան կատարուող շարականներէն ու տաղերէն անկասկած ամենասիրուածն է «Ո՞ՒՐ ԵՍ ՄԱՅՐ ԻՄ»-ը, զոր Հաճեան համերգէն երեք օր առաջ՝ Ապրիլ 21-ին արդէն հնչեցուցած էր Գահիրէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ կամարներուն տակ: Երգչի համերգային եւ եկեղեցական կատարումներուն միջեւ միակ տարբերութիւնը ընդհանուր պահու եւ մթնոլորտի զգացողութիւնն էր: Շատ-շատերու համար թերեւս սիրուած է այս երգին մէջ մահուան սպասող Յիսուսին կատարողամեկնաբանական այլազան հնարանքներով չափազանց մարդկայնացուած ձեւը լսելը, մոռացութեան տալով, թէ խօսքը այր՝ մարդեղացած, բայց նոյնքան ալ Աստուծոյ մասին է: Եւ իսկապէս ալ երգիչը այս երգի իր զոյգ մեկնաբանութիւններով հաստատեց, թէ որքան անտրամաբանական է խաչելութեան պահի Քրիստոսի մէջ մարդկայինի չափազանցուած շեշտադրումը ի վնաս իր Աստուծային էութեան, հետեւաբար երգը հնչեցուց մահը նախասահմանուած կերպով եւ կամաւորաբար ընտրող Արարիչի վեհութեան յստակ ընդգծումով՝ զերծ աստուածային էութեան անյարիր հեկեկայնութենէ:

Յաջորդ երգը հայոց միջնադարի (12-րդ դար) մեծագոյն երաժիշտ Ներսէս Շնորհալիի Ս. Ծննդեան «ՏԵՐ ՈՂՈՐՍԵԱ ՍՏԵՂԾՈՂ ՄԱՆԿԱՆՑ» տաղն էր, որ թերեւս մնացեալ երգերուն համեմատ նուազ ճանչցուածներէն է, բայց Դանիէլ Երաժիշտի շնորհիւ արդէն քանի մը տասնամեակ հոգեւոր երգի համերգային երգացանկերու մէջ հաստատուն իր տեղը ունի: Երգի ձայնածաւալը բաւականին մեծ ըլլալուն շատերը չեն, որ կը համարձա-

կին այս երգը կատարել, մինչդեռ Գէորգ Հաճեանի համարձակութիւնը արդարացուած էր ու տեղին:

Յաջորդող երեք երգերը մեր եկեղեցւոյ պատարագի արարողութիւններու ընթացքին աւելի քան յաճախ կատարուող երգերէն են՝ *մեղեդի* ընդհանուր անուան տակ, եւ որ սովորաբար կը հնչեն պատարագի սկզբին, Աշխարի Գալոցի թափօրէն՝ «Բարեխօսութեամբ»-էն անմիջապէս առաջ: Հետեւաբար Ս. Յարութեան եւ Աստուածածնի նուիրուած եւ լաւապէս գիտցուած ու սիրուած երգերէն են անոնք:

Դանիէլ Երաժիշտի մշակմամբ «Ի ԳԵՐԵՉՄԱՆ» երգը Գէորգ Հաճեան կատարեց լայնաշունչ ու հմայիչ կերպով՝ կարծես Տիրոջ գերեզմանէն յարութեան լոյսը սաւառնեցնելով հանդիսասրահին վրայ:

Ջարեհ Արքեպիսկոպոս Ազնաւորեանի աւանդը կրօնական ու կրթական ասպարէզներու կողքին նշանակալի է նաեւ հայ հոգեւոր երաժշտութեան ասպարէզին մէջ թէ՛ իր յօրինումներով թէ՛ մշակումներով, եւ հրատարակութիւններով: Երջանկայիշատակ հեղինակի լաւագոյն մշակումներէն մէկն է «ՅԱՐԵԱԼ ՔՐԻՍՏՈՍ» երգը, որ Հաճեան կատարեց նախորդ երգի յարութեանական միեւնոյն ոգեւորութեամբ: Իսկ «ՎԱՐԱՆԻՄ Ի ՄԵՂԱՑ» երգը հնչեց մարդկային մեղաւոր էութեան յստակ գիտակցութեամբ եւ Աստուծամտոր բարեխօսութեան եւ Աստուծոյ ներողամտութեան նկատմամբ ամբողջական վստահութեամբ:

Եւ հուսկ, սրահի կամարներուն տակ ծաւալեցաւ այն սրտայոյզ կարօտերգը՝ ձօնուած մեր հայրենիքի խլուած այն հատուածին, որ երեք դար շարունակ մեզի համար առանձին ու անկախ պետութիւն եղաւ, այն չքնաղ երկրին, որմէ արդարեւ առաւել գեղեցիկը չկայ նոյնիսկ անոնց համար ովքեր տեսած են կղզին Կիպրեայ, Լիբանանի լեռներն ու մայրիները, Վենետիկն ու իր կոնտոլները: Համերգի առաջին բաժնի եզրափակիչ հիմնը արդարեւ մեր կորուսեալ երկրին ու թագաւորութեան ձօնուած «ԿԻԼԿԻԱ»-ն էր, որ Հաճեան հնչեցուց որպէս իսկական Կիլիկեցի՝ աշխարհ, որ իրեն արեւ տուած է... (Հաճեան ծագումով Մուսալեռցի է՝ ծնած մուսալեռցիներու նոր բնակավայր՝ Այնճարի մէջ):



Հանդիսատեսի արձագանգը այս երգին եղաւ նոյնքան բուռն ու սրտայոյզ, որքան որ կատարումն էր եւ երգչի ամբողջական տացքը:

Համերգի երկրորդ բաժինը կազմուած էր գերազանցապէս կոմիտասեան երգերէ, ուր մէկը միւսին ետեւէն հնչեցին կոմիտասեան հանճարի գոհարներ՝ անպատասխան կամ դժբախտ սիրոյ (ԵՍ ՍԱՐԷՆ ԿՈՒ ԳԱՅԻ) եւ (ԼԷ, ԼԷ ԵԱՄԱՆ) մարդկային ցաւերուն անհաղորդ բնութեան (ԾԻՐԱՆԻ ԾԱՌ), պանդըխտութեան՝ (ԿՈՌԻՆԿ), (ԿԱՆՉԷ ԿՈՌԻՆԿ) եւ (ԱՆՏՈՒՆԻ), եւ հերոսական սխրանքի ու հայրենասիրութեան (ԲԱՍԲ ՈՐՈՏԱՆ), (ՀԻՄԻ Է՞Ն ԼՈՒՆՔ) եւ (ՀԱՅԱՍՏԱՆ):

Կոմիտասեան այս երգաշարէն իւրաքանչիւրը արդէն ազգային ամբողջական նկարագիր մըն է իր ընդհանրական հոգեբանութեամբ, պատմութեամբ եւ ճակատագրով՝ խտացուած մէկ երգի մէջ, մէկ անհատի մէջ:

Անկարելի է այստեղ շրջանցել Հաճեան երգչի համալիր եւ համակողմանի կրթական պաշար ունեցողի առաւելութիւնը: Ճիշդ է, որ գեղեցիկ ու արտայայտիչ ծայն մը, սուր լսողութիւն եւ առ այդ համապատասխան կրթութիւն մը կրնան ընծայել բեմական յաջողութեան կարելիութիւն, բայց լիարժէք, համոզիչ ու անսայթաք ներկայանալու համար անհրաժեշտ է ըլլալ աւելին քան պարզապէս երգիչ. անհրաժեշտ է սնուած ըլլալ ներկայացուցած արժէքներովդ, դաւանիլ այդ արժէքները եւ բեմէն բաշխել զանոնք ոչ թէ որպէս փոխառեալ, այլ որպէս սեփականութիւն: Հաճեանի յաջողութեան գաղտնիքը հասկնալու համար բաւական է ակնարկ մը նետել իր կենսագրական հակիրճ տուեալներուն.- շրջանաւարտ՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Զարեհեան դպրեվանքին, աշակերտ՝ համաշխարհային համբաւի երգիչ Բարսեղ Թումանեանին, փորձառութիւն՝ տասնեակ երկիրներու մէջ մենահամերգներու շարքի եւ մենակատարումներու երեք խօսուն խտասալիկներ:

«ԵՍ ՍԱՐԷՆ ԿՈՒ ԳԱՅԻ» երգը Հաճեան մեկնաբանեց «Ես սարէն կու գայի, դուն դուռը բացիր» բառերէն բխող լաւատեսական սկսուածքով մը, որ հետագայ տողերու բերումով շեշտակի մռայլեցաւ՝ «Թէ ինձ չէիր առնի, ինչո՞ւ սիրեցիր, մի բուռ կրակ եղար, սիրտս էրեցիր» եւ սիրտ կեղեքող եւ բազում

անգամներ կրկնուող «վայ, վայ, վառուում եմ» բառերուն վրայ իւրաքանչիւր անգամ դնելով ցաւատանջ, իւրայատուկ, նոր ու անմխիթար շեշտ մը:

Պանդուխտի երգերը երգչի կատարմամբ հնչեցին օտարութեան մէջ հասակ առած մարդու սեփական վիճակի ամբողջական գիտակցումով, բայց նաեւ տարագրութեան ցուպն իրմէ արդէն իսկ վանածի եւ այդ խարանը յաղթահարածի ներքին վստահութեամբ: Հայ ինքնութեան անբակտելի բաղադրիչը դարձած «ԿՈՌԻՆԿ»-ը Հաճեան հնչեցուց հոգեմաշ ցաւի զգացումով: Երգը հայկական ուշ միջնադարի սիրուած ու տարածուած երգերէն է, որ Կոմիտաս Վարդապետի աջի հպումով դարձած է տարագրամաշ եղած ամբողջ ժողովուրդի մը ցաւի ու կարօտի զգացումներուն խտացումը: Եւ որքան Հաճեանի ծայնը կը փայլէր կռունկի ո՞րկէ գալը հասկնալ ուզողի սրտի թրթիռով, նոյնքան ունկնդրի սիրտը կը ճմլուէր մեր աշխարհէն խապրիկ մը սպասող եւ յոռեգոյնը՝ երբեմն խապրիկ մ'իսկ չսպասող այսօրուայ տարագիրներու հաշույն:

Հետեւեցաւ «ԾԻՐԱՆԻ ԾԱՌ» երգը, որ Հաճեան սկսաւ արքայական պտղատուն՝ ծիրանենին իսկ սաստող լայնաշունչ արգելական հրամայականով մը՝ «Ծիրանի ծառ բար մի՛ տար», եւ քիչ անց իր իսկ պոռթկումէն ընկճուած, աստիճանական նուաղումով հրաշալի մեղմագոյնի վերածուած ծայնով մը կը յաւելէր. «Ամէն մէջդ ման գալիս, ցաւերս իրար մի՛ տար»: Եւ այսօր ալ արդէն ի՞նչ կը ճչան մեր հոգիները Ապրիլ 24-եան իւրաքանչիւր խոկումի, իւրաքանչիւր տարուայ իւրաքանչիւր օրը, եթէ ոչ «Գնայ, էլ յետ չգայ էս տարուայ տարին, սեւ տարտն իմ վզովն ընկաւ»:

Ազգային ինքնութենէն անբաժանելի՝ արեան գոյն դարձած «ԼԷ ԼԷ ԵԱՄԱՆ» սիրերգը Գէորգ Հաճեան սկսաւ այնպիսի լիաթոք բացազանջականով մը, որով կարծես կը փորձէր չափել Վանայ ծովը ափէ-ափ, եւ շարունակեց կարօտի այնպիսի մորմոքով մը, որ մոռնալ անկարելի է:

Կրկին վերադառնալով պանդխտութեան նիւթին երգիչը այս անգամ հնչեցուց արտայայտչամիջոցներու մէջ թէեւ «ԿՈՌԻՆԿ»-ին համեմատութեամբ առաւել զուսպ, բայց յու-



զականութեան քնքշութեամբ առաւել ջերմ «ԿԱՆՉԷ ԿՈՌԻՆԿ»-ը. «Կանչէ՛ կռունկ, կանչէ՛, քանի գարուն է, դարիպներուն սիրտը գունդ-գունդ արուն է»: Եւ դժուար էր երգի աւարտին «Ախ, եարիս բարեւէ» վերջին եւ անյոյս պատգամով ծնած թանկագին լռութիւնը ընդմիջել ծափերով:

Եւ ահա հնչեց իր պարզութեամբ, բայց եւ վեհութեամբ, ներդաշնակման եւ խօսքի ու երաժշտութեան համադրութեան գիւտերով անմրցակից, կոմիտասեան հանձարի արգասիք «ԱՆՏՈՒՆԻՆ»: Բառերը որքան անօգնական են այս պահուն վերարտադրելու համար հոգեղէն այն վայրկեանները, երբ Հաճեան իր ամենաթափանց ձայնով կը ճըմլէր հանդիսատեսի սրտի ամենախոր անկունները՝ զինաթափելով մէն մի ունկնդիրը:

Եւ երբ մարդօրէն, հայօրէն բաբախող բոլոր սրտերը արդէն պատրաստ էին ցաւի եւ յուսահատութեան ցասումէն եւ ինքնութեան գիտակցութեան քուրայէն ծնուելիք կոչին, հնչեց «ՀԻՄԻ Է՞՛Լ ԼՈՒԵՆՔ»-ը: Այստեղ արդէն երգչի ձայնը կը ստանար բամբ շեշտ, արծւենի հայեացքը կ'որոնէր ամէն, ամէն մէկուն եւ հրաւեր կը կարդար իւրաքանչիւրի արժանապատուութեան, իւրաքանչիւր «քաջ սիրտ ու հոգի» ունեցողի, հաւաստելով, որ եթէ անգամ պիտի լռենք, մեր փառքը գոնէ մահով ետ խլենք ու այնպէս լռենք:

Պահը եկած էր ներկայացնելու մեր ունկնդրին անծանօթ «ԱՊՐԻԼ 24» ազդեցիկ երգը՝ Դանիէլ Երաժիշտի երաժշտական յորինումով եւ հայ ժողովուրդի անկեղծ բարեկամներէն լիտուացի ժամանակակից յայտնի բանաստեղծ Էտուարտաս Մեժելայտիսի խօսքերով, որ հայոց ողբերգութեան նկատմամբ կարեկից ոչ հայ բանաստեղծ-մտաւորականի վշտալի սրտի մէկ արտայայտութիւնն է: Հաճեան խոստովանեցաւ նաեւ, թէ երգի առաջին կատարման՝ ցուցանորի պատիւն իրենը եղած է:

Վշտալի «ԱՊՐԻԼ 24» երգին հակադրուեցաւ անցեալի եւ ապագայի յաղթանակներու ճամբայ բացող հայոց ռազմերգը՝ «ԲԱՍԲ ՈՐՈՏԱՆ»: Երգի ռազմաշունչ, կոչական եւ գոտեպնդիչ ելելէջները, Հաճեանի դղրդացնող շեփորումով հայրենեաց հրաւերը կարդացին երեկոյին ներկայ հայկազանց՝ բորբո-

քելով անոնց հոգիներուն մէջ վրէժի հուրը:

Որմէ յետոյ Դանիէլ Երաժիշտի մշակմամբ հանրայայտ «ԹՈՂ ՀՆՉԵՆ ՇԵՓՈՐՔ» երգով շեփորուեցան ու զարկին զանգերը եւ ազդարարեցին վրէժառութեան օրուան հասնիլը. «Թող համայն աշխարհի հէնց լաւ իմանայ, մենք՝ հայերս կանք ու պիտի մնանք»:

Գէորգ Հաճեան համերգի ամբողջ ընթացքին յանձին դաշնակահար Հայկ Աւագեանի ունեցաւ նուագակցող մը, որ թեւ ու վստահութիւն կու տար երգչին՝ ազատ կատարողականութենէն մինչեւ յանկարծաբանական կարելիութիւն, մեներգիչ-նուագակցող կապի հնչողական փնտռուած հաւասարակշռութենէն մինչեւ երգչային ձայնին ճախրանքի ազատութիւն տուող իրական ու հոգեբանական յենարան:

Համերգի եզրափակիչ երգը նախատեսուած էր «ՀԱՅԱՍՏԱՆ ԵՐԿԻՐ ԴՐԱՒՏԱՎԱՅՐ»-ը, որ գազաթնակէտին հասցուց հանդիսատեսին խանդավառութիւնը: Հաճեան իւրաքանչիւր դէպի վեր մազլցող, ապա ծորացող ու կրկին վեր մազլցող Հայաստան բացազանչութեամբ հոգիէն բխող եւ հոգիները թունդ հանող իր հզօր եւ միաժամանակ փափուկ ձայնով կարծես կ'ուզէր գրկել ամբողջ Հայաստանը, ծայրէ ի ծայր, առանց մատնաչափ մ'իսկ դուրս ձգել ուզելու անկէ: Արուեստագէտները կրկին ու կրկին բեմ հրաւիրող հանդիսատեսի ծափողջոյններուն ի պատասխան դարձեալ փայլեցան «Թող Հնչեն Շեփորք»-ի վրիժառութեան փողհարումները: Բայց «Հայաստան Երկիր Դրախտավայր»-ով արդէն մեր հին ու նոր երկրի նիւթական եւ աննիւթական բոլոր հորիզոնները լի էին պատմութեան խորքերէն եկող եւ ապագայի գազաթները նուաճելիք հայրենիքի յաղթական սիրով, իսկ այդ յաղթական սիրոյ ծննդավայր եւ բնակատեղի սիրտերը առաւել փարած էին հայ արժէքներուն, հայ ժառանգութեան, հայ ապագայի ընդհանրական տեսիլքին:

ՄԻՀՐԱՆ ՂԱԶԷԼԵԱՆ



## Մ Ա Յ Ր

### ՄԱՅՐՈՒԹԻՒՆ . . . ՄԱՅՐԵՐՈՒ ՕՐ . . .

Նուիրական ու պաշտելի տօն մը: Տօն մը, որուն մասին ոչ ոք կը ձանձրանայ խօսելէ: Տօն մը, որ քնաւ ժամանակավրէպ չ'ըլլար, որովհետեւ ամէն օր մայրերու օր է:

Չկայ ակելի վեհ ու նուիրական կոչում մը, քան մայրութեան կոչումը:

Որո՞ւ սրտին չի խօսիր «մայր» բառը. որեւէ լեզուի մէջ ամենաքաղցրահնչիւն բառն է ան անկասկած: Բոլոր հրաշալի ածականները կը զուգորդուին այդ բառին:

Մայր. սփոփարար ու մխիթարիչ բառ մը, որ զօրաւոր սպեղանիի մը նման իր բուժիչ դերը կ'ունենայ մեր վրայ՝ (առանց սեռի եւ տարիքի խտրութեան) մեր ծննդեան առաջին պահէն երբ մանաւանդ նեղութեան կամ հիւանդութեան մը ենթարկուած ենք:

Մայրիկ. երբ կ'արտասանենք այս բառը, մեր առջեւ կը պատկերանայ անձնուիրութեան ու գուրգուրանքի, ներողամտութեան ու համբերատարութեան, հերոսութեան ու բարութեան մարմնացում անհատ մը: Ան չի գիտեր կեղծել, ստել կամ դաւաճանել իր զաւակին հանդէպ այլ գիտէ սիրել՝ բիրտեղացած անբիծ սիրով մը, խնայել ու խնամել զայն ու զոհուիլ անոր համար:

Մայր մը իր ընտանիքին կորիզը, օճախն ու սիւնն է: Կեանքի մէջ յոյժ պատասխանատու պարտականութիւնը տրուած է անոր, որ ամէն դժուարութիւններու եւ խոչընդոտներու դէմ տքնելով, մաքառելով ու պայքարելով կը կերտէ վաղուան մարդը՝ ազգին գոյատեւումն ու ապագան:

Չակին առաջին ուսուցիչը, առաջին ազատարարն է մայրը. ի գին ամէն զոհողութեան ան կը տոկայ ու կը համբերէ, շնորհիւ միմիայն իր ծնողական մաքրամաքուր սիրոյն:

Որքան ակելի գնահատանքի արժանի են մեր հայ մայրերը. տոկունութեան, աշխատասիրութեան, համբերատարութեան տիպար հա՛յ մայրերը:

Չապա հայ մեծ մայրե՞րը. տառապանքի ու չարչարանքի, տարագրութեան ու դժոխային ժամանակներու դառնագոյն դժուարութիւնները չարքաշութեամբ մինչեւ վերջ կրելով, պահպանեցին հայ ազգն ու լեզուն, հայու պատիւը, տոհմային սրբութիւններն ու ավանդութիւնները:

Չայ ընտանիքներուն օրհնութիւնն են մեծ մայրերը, որոնք ծնրադրութեան ու գորովանքի արժանի են:

Մայրեր աշխարհի, անբացատրելի խանդաղատանքով կը խոնարհիմ Ձեր Սրբութեան առջեւ:

Շաքէ Մարգարեան



**ԿԻՐԱԿԻ, 24 ԱՊՐԻԼ 2011  
ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆ  
ԵՒ**

**Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ Ե-ՔԱՆՇԱՆԻ  
ՏՈՒՉՈՒԹԻՒՆ**

Քրիստոնեական հաւատքի եւ Վարդապետութեան հիմքը հանդիսացող Սուրբ Յարութեան Տօնին Աւետիսը հնչեց Աւագ Շաբաթ օր երեկոյեան, Գահիրէի Ս.Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցիին մէջ, Գահիրէի հոգեւոր հովիւ Արժ. Տ. Յակոբ Քիւյ. Յակոբեանի մատուցած ճրագալոյցի Պատարագի ընթացքին:

Քրիստոս Յարեալ ի Մեռելոց:

Աւետիսը տարածուեցաւ ժողովուրդին մէջ եւ նախորդ օրուան «Խաչելութեան» ցաւը վերածուեցաւ ուրախութեան:

Ինչպէս ամէն տարի Յարութեան Տօնին, այս տարի եւս Ս.Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցին բազմամարդ էր: Հանդիսաւոր Սուրբ Պատարագին, զոր կը մատուցէր Թեմիս Բարեխնամ Առաջնորդ Գերշ. Տ. Աշոտ Եպիսկոպոս Մնացականեան, կը հետեւէին ներկայ պետական կառոյցներու ներկայացուցիչներ, ՀՀ Արտակարգ եւ Լիազօր դեսպան Տոքթ. Արմէն Մելքոնեան, ՀՀ Դեսպանատան անձնակազմը, Գահիրէի Թեմական Ժողովի փոխ ատենապետ Տիար Կարպիս Եազըճեան, Գահիրէի Քաղաքական

Ժողովի ատենապետ Տոքթ. Գերգ Երզընկացեան եւ հաւատացեալ հոծ ժողովուրդ մը: Մօ. Միհրան Ղազէլեանի ղեկավարած երգչախումբը եկեղեցիին վերնատունէն եւ Դպրաց Դասը ներդաշնակ եւ առինքնող կատարումով կը մասնակցէին Սուրբ Պատարագին:

Պատարագի ընթացքին, Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Կաթողիկոսի յղած. Ս. Յարութեան պատգամը ընթերցեց Սրբազան Հայրը:

Ապա Սրբազան հօր արաբերէնի թարգմանուած խօսքը ընթերցեց Տոքթ. Ճորճ Սիմոնեան:

Երգչախումբին «հրաշափառ» շարակաւի կուռ կատարումին ներքեւ, Արժ. Տէր Հայրը Եկեղեցական թափօրին ընկերակցութեամբ խորան բարձրացուց Ամենայն Հայոց Գարեգին Բ Վեհափառ Հայրապետին յղած Սրբատառ Կոնդակը, որ կը պարգեւատրէր Տիար Պերճ Թերզեանը Ս. Սահակ - Ս. Մեսրոպ բարձր շքանշանով:

Գահիրէի Թեմական Ժողովի անդամ,



Ohan Janikian





ՀԲԸՄ-ի Շրջանակային Յանձնաժողովի Առենապետ, Գահիրեի ՀԲԸՄ-ի Պատուոյ Առենապետ Տիար Պերճ Թերզեան մօտ կէս դար իր տարած ազգային վաստակաշատ գործունեութեան համար արժանացած էր սոյն շքանշանին:

Առաջնորդ Սրբազան Հայրը, յանուն Վեհափառ Հայրապետին, ընթերցել էտք Սրբատառ Կոնդակը, շքադրեց Տիար Պերճ Թերզեանը անոր լամբակին ամրացնելով Ս. Սահակ ՎՆ Ս. Մեսրոպ շքանշանը:

Արարողութեան աւարտին եկեղեցական թափօրը, շքանշանակիր Տիար Պերճ Թերզեան եւ իր Տիկինը, նաեւ թափօրին հետեւող հաւատացեալներ, ուղուեցան Առաջնորդարանի Դահլիճը, ուր կատարուած տնօրինեղծի արարողութենէն ետք, Սրբազան Հայրը խօսք անելով շնորհաւորեց ներկաները Զրիստոսի Յարութեան Տօնին առթիւ:

Ապա ան դրուատեց օրուայ մեծարեալին մեր գաղութն ներս ունեցած բազմաբնոյթ գործունեութիւնը ու շնորհաւորեց Տեր եւ Տիկին Թերզեանները այս պատիւին արժանանալուն առիթով: Բարեկամներու շնորհաւորական ձեռքսեղմումներով իր լրումին հասաւ տօնական օրը: Սակայն .....

Աւարտած էին Ս. Յարութեան Տօնին եւ շքադրումին արարողութիւնները: Սակայն, այս երկուքին համընկնիլը Ապրիլ 24-ին, մտորումներու առիթ կու տային:

Ապրիլ 24-էն առաջ, Ապրիլ 24-ին եւ անկէ ետք կատարուած հայերու ծրագրուած բնաջնջումը չհասաւ իր նպատակին: Հայ ժողովուրդը վերապրեցաւ, վերապրեցաւ ոչ միայն իր հողին վրայ, այլ ամենուրեք: Ապրիլի 24-ը սգատօն չէ այլեւս այլ յուշատօն, նահատակներու «Վերապրման Տօն» է:

Սօտ մէկ դար է իր հողերէն արմատախիլ եղած «Յաւերժի ճամբորդ» մեր համափիւռ ժողովուրդը, իր վրէժը կը լուծէ ապրելով ու արարելով, դիմելով կարելի ամեն միջոցի, վերստանալու իր իրաւունքները:

Կիլիկեցի արմատներ ունեցող Տիար Պերճ Թերզեան կը պատկանի հայորդիներու այն փաղանգին, որոնք իրենց գործունեութեամբ կը նպաստեն ոչ միայն իրենց համայնքին կենսունակութեան, այլ նաեւ հայրենիքին եւ մեր կորուսեալ իրաւունքներուն վերահաստատման:

Տիար Պերճ Թերզեան վրիժառութեան համար ի գործ կը դնէ ազնուագոյն միջոցներէն մէկը՝ իր գրիչը:

Շնորհաւորելով կը բաժնենք Տեր եւ Տիկին Պերճ Թերզեաններու ուրախութիւնը, մաղթելով որ Ս. Սահակ - Ս. Մեսրոպ պահապան ըլլան իրենց, որ Տիար Թերզեանի միտքը ըլլայ միշտ պայծառ, գրիչը՝ հաստատ ու սուր եւ անխաբան շարունակէ իր ընտրած ուղին:

Արաքսի Տօվլէթեան



Ohan Janikian





# ՊԵՐՃ ԹԵՐԶԵԱՆ

## Հասարակական Գործունեություն

- 1957-Էն սկսեալ անդամակցած է Գահիրեի Հայ Գեղարուեստասիրաց Միության (համագործ ԹՄՄ-ի), գործուն օժանդակություն բերելով անոր տարբեր շրջաններու վարչություններուն. 1975-ին եղած է նոյն միության փոխ ատենապետը:  
1968-Էն սկսեալ երկար տարիներ անդամակցած է Հայ Ազգային Հիմնադրամի («Արեւ» օրաթերթի հրատարակիչ) վարչության եւ 1970-ականներու սկիզբը քանի մը տարի վարած է ատենապետի պաշտօնը:  
1998-2009 «Արեւ» օրաթերթի արաբերէն ամսօրեայ յաւելուածին հայկական նիւթերու խորհրդատու եւ հեղինակ անոր առաջնորդող յոդուածներուն մեծամասնութեան:
- 1964-Էն սկսեալ անդամ ՀԲԸՄ-ի եւ անոր Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովին՝ 47 տարի անընդմէջ գործելով որպէս փոխ գանձապահ, փոխ ատենապետ եւ հուսկ ատենապետ (1988-Էն): 1980-Էն 1990 անդամ Գահիրեի ՀԲԸՄ ՆՈՒՊԱՐ մարզարանի վարչութեան, որ կը ներկայացնէ ՀԲԸՄ-ի Եգիպտոսի մարզական թելը: Չանագան շրջաններու օժանդակած եւ անդամակցած է ՀԲԸՄ-ի Գահիրեի տեղական մասնաժողովին եւ 1992-Էն 2002 վարած է անոր ատենապետութիւնը: Խմբագրական խորհրդատու Գահիրեի ՀԲԸՄ-ի «Տեղեկատու» եռամսեային:  
2007-ին ընտրուած է Գահիրեի ՀԲԸՄ-ի Պատուոյ Ատենապետ:  
2010 Ապրիլէն սկսեալ հայկական նիւթերու խմբագրական խորհրդատու Գահիրեի ՀԲԸՄ-ի արաբալեզու «Արեգ» ամսօրեային:
- 1967-Էն սկսեալ, տարբեր շրջաններու, անդամ Եգիպտոսիայ Ուսումնական Խորհուրդին եւ Նուպարեան Ազգային Վարժարանի Հոգաբարձութեան: 1975-Էն 1992 անդամ Գահիրեի Թեմական եւ Զաղաքական Ժողովներուն: 2000-Էն սկսեալ դարձեալ անդամ Գահիրեի Թեմական Ժողովին եւ 2003-2006 ատենապետ Զաղաքական Ժողովի:
- 1992-ին ՀՀ Գահիրեի դեսպանատան բացումէն սկսեալ անդամ Դեսպանատան Բարեկամներու Խորհուրդին:  
1999-ին ստացած է Մաշտոցի անուան Մատենադարանի յատուկ վկայագիր եւ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ յուշամետալ՝ գիտահրատարակչական աշխատանքներու սատարելուն համար:  
2005 Դեկտեմբերին, ի շարս այլոց, ստացած է ՀՀ վարչապետին շնորհակալագիրը Գահիրեի մէջ Հայաստանի դեսպանատան օժանդակութիւն ցուցաբերելուն համար:  
2007 Ապրիլին, ի շարս այլոց, ստացած է ՀՀ նախագահական շնորհակալագիր՝ 1992-Էն սկսեալ Գահիրեի մէջ Հայաստանի դեսպանատան սատար կանգնելուն համար:
- 2008-ին լոյս տեսած է իր «ԵԳԻՊՏԱՐԱՅ ՀԱՅԵԱՑԸՆԵՐ Պատմութեան, Զաղաքականութեան եւ Մշակութային Ժառանգութեան Մասին» արաբերէն հատորը, որ կը պարփակէ «Արեւ»ի արաբերէն ամսօրեայ յաւելուածով լոյս տեսած 40 առաջնորդող յոդուածներ:
- 2010-ի Սեպտեմբերին լոյս տեսած է իր «ՅԵՏԱԴԱՐՁ ԱՆԴՐԱԴԱՐՁ» հայերէն հատորը, որ կը պարփակէ մեծամասնութեամբ «Արեւ» օրաթերթին մէջ լոյս տեսած իր յօդուածներէն հաւաքածոյ մը, ինչպէս նաեւ տարբեր առիթներով իր ունեցած կարգ մը էլոյթները, հարցազրոյցները եւ եգիպտոսի վարժարաններու մասին ուսումնասիրութիւն մը:
- 2010-ի Հոկտեմբերին Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսէն պարգևատրուած է Ս. Սահակ - Ս. Մեսրոպ շքանշանով եւ Հայրապետական Կոնդակով, որպէս գնահատանք իր երկարամեայ ազգային-եկեղեցական, միութենական եւ հրապարակագրական գործունեութեան:
- 2011 Ապրիլին ՀԲԸՄ-ի Կեդրոնական Վարչական Ժողովի որոշումով կ'արժանանայ ՀԲԸՄիութեան «Պատուոյ Անդամ»ի տիտղոսին, որպէս գնահատանք Միութեան մէջ իր ունեցած տասնամեակներու բազմաբնոյթ գործունեութեան:







# AGBU

## ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՐ ՄԻՈՒԹԻՒՆ

55 East 59th Street, New York, NY 10022-1112 U.S.A. T: 212 319-6383 • F: 212 319-6507/08 • E: agbunyt@agbu.org • W: www.agbu.org

21 Ապրիլ 2011

Մեծայարգ  
Տիար Պերճ Թերզեան  
Ատենապետ Հ.Բ.Ը.Մ.ի  
Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովին

Միրելի Պերճ,

Մեծ գոհունակութեամբ տեղեկացայ թէ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Վեհափառի Օրհնագիր Կոնդակով արժանացած եւ Ս.Սահակ եւ Ս. Մեսրոպ Պատուոյ շքանշանին, որպէս գնահատանք երկար տարիներու ազգանուէր գործունէութեանդ եւ գերազանց ներդրումներուդ՝ միութենական, թեմական, ազգային, քաղաքական, մարզական եւ հրապարակագրական տարբեր մարզերու մէջ, ի սպաս յատկապէս Եգիպտոսի Հայ գաղութին, ինչպէս նաեւ աշխարհատարած հայութեան, Սփիւռքի եւ Հայաստանի մէջ:

Երկար տարիներու մեր միութենական գործունէութենէն եւ անձնական մտերմութենէն բխող ծանօթութեամբ, կրնամ խորապէս գնահատել այն ամբողջական նուիրումը եւ պաշտամունքը զոր կը տածես մեր ազգին, մշակոյթին եւ հայրենիքին հանդէպ, կենսամուէր, հետեւողական, յամառ եւ արդիւնաւոր աշխատանք ու առաջնորդ դեր կատարելով անոնց պահպանումին, զարգացումին եւ ծանօթացումին ուղղութեամբ:

Հետեւաբար, գերազանց վաստակդ Հայրապետական բարձր ճանաչումի արժանացնող այս պատեհ եւ արժանի նախաձեռնութիւնը, որ պիտի գործադրուի Ս. Զատկուան Տօնի յատկանշականօրէն Ապրիլի 24-ին, համոզուած եմ որ պիտի աւելնայ բեղուն աշխատանքիդ արդիւնաւորութեան առթած հոգեկան խոր բաւարարութեան վրայ:

Այս առիթով Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Կեդրոնական Վարչական Ժողովին անունով եւ անձնապէս իմ եւ Վերային կողմէ, արժանի վարձատրութեանդ կը միացնենք մեր գնահատանքի եւ խնդակցութեան զգացումները:

Սրտանց կը շնորհաւորենք քեզ եւ ազնիւ տիկինդ Սեդան, մաղթելով անսպառ եռանդ ազգանուէր աշխատանքներուդ մէջ:

Բարեկամական Զգացումներով՝

Պերճ Սեդրակեան  
Նախագահ

### CENTRAL BOARD OF DIRECTORS:

**PRESIDENT** - BERGE SETRAKIAN. **VICE PRESIDENT** - SINAN SINANIAN. **TREASURER** - SAM SIMONIAN. **SECRETARY** - BERGE PARAZIAN.

**HONORARY MEMBER** - HIS HOLINESS KAREKIN II, Catholicos of All Armenians.

**MEMBERS** - *United States*: M. MICHAEL ANSCOUR, CAROL BAGDASARIAN ASLANIAN, JOSEPH BASRALIAN, YERVANT DEMIRJIAN, NAZARETH FESTEYJIAN, ARDA HARATUNIAN, SARKIS JEZEJIAN, LEVON NAZARIAN, JOSEPH OUGHOURJIAN, DICHRAN TEVKIZIAN, YERVANT ZORIAN. *Argentina*: RUBEN KECHICHIAN. *France*: ARIS ATAMIAN. *Suisse/Canada*: VAHE GABRACHE. *Syria*: VASREN YACOUBIAN.

**COUNCIL OF TRUSTEES** - SARKIS DEMIRJIAN, RICHARD MANOOGIAN, NAZAR NAZARIAN, LOUISE MANOOGIAN SIMONE, KARNEG YACOUBIAN.

**IN MEMORIAM** - BOGHOS NUBAR, *Founder*; ALEX MANOOGIAN, *Honorary Life President*.



21 Ապրիլ 2011

Մեծայարգ  
 Տիար Պերճ Թերզեան  
 Ատենապետ Հ.Բ.Ը.Մ.ի  
 Եզիպտոսի Շրջանակային Յանձնաժողովին

Յարգելի Պրն. Թերզեան,

Նկատի ունենալով Հ.Բ.Ը.Միութեան մատուցած ձեր բազմամեայ հաւատարմ  
 ծառայութիւնը, ձեր ստանձնած ղեկավար յանձնառութիւններով եւ գնահատելի ու արդիւնատր  
 նախաձեռնութիւններով, յատկապէս նկատի ունենալով 47 տարիներու ձեր ժրջան  
 գործունէութիւնը Միութեան Եզիպտոսի շրջանակներուն մէջ՝ ուր ձեր գործակիցներով  
 շրջապատուած, իրականացուցած էք բազմաթիւ ծրագիրներ, որպէս Շրջանակային  
 Յանձնաժողովի թէ Գահիրէի տեղական վարչութիւններու ատենապետ, անդամ Հ.Մ.Ը.Մ.  
 Նուպարի եւ խմբագրական խորհրդատու Միութեան «Տեղեկատու» եռամսեային, ազգային,  
 հասարակական, քաղաքական, հրապարակագրական, մշակութային եւ կրթական ձեր այլ  
 գործունէութիւններուն առընթեր, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան  
 Կեդրոնական Վարչական Ժողովը որոշեց իբր արժանի վարձատրութիւն, ձեզի շնորհել  
 Հ.Բ.Ը.Միութեան Պատուոյ Անդամի բարձր տիտղոսը:

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Կեդրոնական Վարչական Ժողովին  
 անունով եւ անձնապէս, ինձի համար մեծ ուրախութիւն է յայտնել մեր բարձր գնահատանքը եւ  
 երախտագիտութիւնը, ձեր կենսանուէր երկարամեայ ծառայութիւններուն, ամբողջական  
 նուիրումին եւ գերազանց ներդրումներուն համար՝ Եզիպտոսի համայնքին ու ընդհանրապէս  
 աշխարհատարած Հայութեան, Սփիւռքի թէ Հայաստանի մէջ:

Այս առթիւ ջերմօրէն կը շնորհատրենք ձեզ եւ ձեր ազնիւ տիկինը Սեդան, մաղթելով  
 երկար առողջ կեանք եւ անսպառ եռանդ ձեր միութենական եւ ազգանուէր աշխատանքներուն  
 մէջ:

Յարգանքներով՝

Պերճ Սեդրակեան  
 Նախագահ

**CENTRAL BOARD OF DIRECTORS:**

**PRESIDENT** - BERGE SETRAKIAN. **VICE PRESIDENT** - SINAN SINANIAN. **TREASURER** - NAM SIMONIAN. **SECRETARY** - BERGE PAPAIZIAN.

**HONORARY MEMBER** - HIS HOLINESS KAREKIN II, Catholicos of All Armenians.

**MEMBERS** - *United States:* M. MICHAEL ANSOUBI, CAROL BAGDASARIAN ASLANIAN, JOSEPH BASBALLIAN, YERVANT DEMIRJIAN, NAZARETH PESTERJIAN, ARDA HARATUNIAN, SARKIS JEREJIAN, LEVON NAZARIAN, JOSEPH OUGHOURLIAN, DICKRAN TEVRIZIAN, YERVANT ZORIAN. *Argentina:* RUBEN KECHICHIAN. *France:* ARIS ADAMIAN. *Switzerland:* VAHE GABRACHE. *Syria:* VUSKEN YACOUBIAN.

**COUNCIL OF TRUSTEES** - SARKIS DEMERJIAN, RICHARD MANDOGIAN, NAZAR NAZARIAN, LOUISE MANDOGIAN SIMONE, KARNIG YACOUBIAN.

**IN MEMORIAM** - BOGHOS NUBAR. *Founder:* ALEX MANDOGIAN, *Honorary Life President.*



**ԵԳԻՊՏԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՅԱԲԱԼԻ ԿՈՐՈՒՍՏԸ  
ՄԱՀ**

**ԳՎՀԻՐԷԻ ԹԵՄԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՏԵՆԱՊԵՏ՝  
ՏԻԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՄԵՍՐՈՊԵԱՆԻ**



Եթե կարելիությունը ըլլար խառնուելու Աստուծոյ գործերուն, պիտի աղօթէիք, որ Ան քիչ մը եւս ապրելու առիթ ընծայէր, այն մարդուն, որուն մահուան բօթը 26 Մարտ 2011-ին, հասաւ մորմոքելու սրտերը բոլոր անոնց, որոնք որեւէ ձեռով առնչութիւն ունէին անոր հետ:

Տիար Անդրանիկ Մեսրոպեան տակաւին գործօն էր, նուիրուած ու նուիրաբերող ազգային, հոգատար գործատեր, սիրող ու սիրուած ամուսին, հայր ու մեծ հայր, նաեւ իր ստանձնած պաշտօնին պատասխանատուութեան գիտակցութիւնը ունեցող անձնաւորութիւն, որ փնտռուած ու յարգուած ներկայութիւն մըն էր բոլորէն եւ ամենուրեք: Վկայ Գահիրէի ՅԲԸՄ-ի կայքէջ այցելած բազմաթիւ անձերու ձգած ցաւակցութեան եւ սփոփանքի արտայայտութիւնները:

27 Մարտ 2011-ի ժամը 1:00-ին յուղարկուորներու հոծ բազմութիւն մը ներկայ էր Գահիրէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցիին մէջ, ուր տեղի ունեցաւ Գահիրէի Պատկառելի թեմական Ժողովի Ատենապետ՝ հանգուցեալ Անդրանիկ Մեսրոպեանի թաղման եկեղեցական կարգը, Թեմիս Բարեխնամ Առաջնորդ Գերշ. Տ. Աշոտ Եպս. Մնացականեանի արարողապետութեամբ եւ հոգեւոր դասին մասնակցութեամբ:

Արարողութենէն ետք Սրբազան Հայրը խօսք առնելով նախ իր վըշտակցութիւնը յայտնեց բոլոր սգակիր ներկաներուն, ապա անդրադարձաւ ողբացեալին ազգային-հայրենասիրական գործունեութեան ու դրուատեց անոր ունեցած մարդկային բարձր արժանիքները: Սրբազան Հայրը փոխանցեց նաեւ Ամենայն Հայոց

Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսին ցաւակցութիւնները Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հանգուցեալ բարերարին ընտանիքի բոլոր անդամներուն եւ սգակիր պարագաներուն:

Հայ Կաթողիկէ համայնքի Առաջնորդ Արհիապատիւ Գրիգոր Օգոստինոս Եպսկ. Գուսանի արտասանած ցաւակցական խօսքէն ետք, ցաւակցական ուղերձներով արտայայտուեցան գաղութիս զանազան կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, իսկ Սրբազան Հօր խօսքին արաբերէն թարգմանութիւնը ընթերցեց Տոբթ. Ճորձ Սիմոնեան:

Աւարտին, Հելիոպոլսոյ Ամենայն Սրբոց Գերեզմանատան մէջ գտնուող Մեսրոպեան ընտանեկան դամբարանին մէջ ամփոփուեցաւ անշնչացած մարմինը, եգիպտահայ արդի պատմութեան կերտման մէջ իր բաժինը ունեցած Անդրանիկ Մեսրոպեանի:

Արաքսի Տօժլէթեան



## Կենսագրական գիծեր

Ողբացեալ Անդրանիկ Մեսրոպեան ծնած է 1928-ին Գահիրէ: Աւարտած՝ English Mission College-ը

1948-ին հիմնած է իր «Bamboo Anto» եղէգնեայ իրերու արտադրութեան հաստատութիւնը:

1951-ին անդամակցած է Գահիրէի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան:

1967-ին մաս կազմած է Հայ Ազգային Հիմնադրամի Կոկանեան Սրահի Վարչութեան, ապա շուրջ 5 տարի վարած՝ անոր փոխ ատենապետի եւ ատենապետի պաշտօնները:

1979-ին ընտրուած է Գահիրէի Թեմական Ժողովի անդամ եւ մի քանի շրջան վարած է Քաղաքական Ժողովի Ատենապետի պաշտօնը: 1990-էն մինչեւ իր մահը ատենապետն էր Գահիրէի Թեմական Ժողովին:

1993-ին, երջանկայիշատակ Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսին կողմէ յղուած Սրբատառ Կոնդակով, Ս. Գրիգոր Լուսաւորիչ շքանշանին արժանացած է, Մայր Աթոռին հանդէպ իր տածած ջերմ, որդիական սիրոյն եւ կատարած բարերարութեան համար:

Ողբացեալը Եգիպտահայ Թեմը ներկայացուցած է Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան, ինչպէս նաեւ մասնակցած է տարբեր առիթներով Մայր Աթոռի կազմակերպած ժողովներուն:

1992-ին մաս կազմած է Եգիպտոսի մէջ ՀՀ Դեսպանատան Բարեկամներու Խորհուրդին, իր բարոյական եւ նիւթական աջակցութիւնը բերելով դեսպանատան գործունեութեան, մինչեւ իր մահը: Իր գործունեութեան համար շնորհակալագիրեր ստացած է ՀՀ Վարչապետ Անդրանիկ Մարգարեանէն՝ 2005-ին եւ ՀՀ Նախագահ Ռոպերթ Քոչարեանէն 2007ին:

Ան ամուսնացած է Նուարդ Ներսէսեանի հետ: Ունի երեք դուստրեր՝ Տիանա, Լիլիան եւ Սիւզի:



# ԱՐԱ ՍԻՄՍԱՐ ՆԱՄԱԿԱՆԻՇԵՐՈՒ ԱՆՈՒՇ ՄԵՂԵԳԻՆ

**Արա Սիմսար, 59 տարեկան, հայկական ծագումով գուլիցերիացի մըն է, որ 25 տարի է վեր տնտեսագետ է եւ երդուեալ թարգման: Հմուտ դրոշմագետ, ան կ'որոշէ, մի միայն սոր սամականիշերու ընդմէջէն, սուիրուիլ հիւնէն ի վեր իր էութեան խորքը թաքնուած, պաշտած նիւթին՝ երաժշտութեան: Անխոնջ ճամբորդ, «իր» դրոշմագիտութիւնը կը սնանի փոխանակումներով եւ անթիւ հանդիպումներով:**



2005 Հայաստան (Սպիրիտոն Մելիքեան)



2001 Պոսնիա եւ Հերցեգովինա (Ալպերդ Այնշթայն, Ֆիզիկոս, ջութակահար եւ երաժշտական գրող)



1949 Բրիտանական Կիլանա (Փոռ)

Դրոշմագիտութեան հանդէպ իր ունեցած սերը, հակումը ընտանեկան էր: Իր մօրեղբայրն էր, որ մօտ 45 տարի առաջ, իրեն տուած էր սամականիշերու ճաշակը: «Ինծի փոխանցեց «ժահր»ը կ'ըսէ ան, ապա կը յարէ. «Նամականիշերու գեղեցկութիւնը, անոնց հանդէպ մօրեղբօրս ունեցած բուռն սերը, զանոնք դասաւորելու համար անոր տարած բծախնդիր աշխատանքը, զիս մղեցին դրոշմանիշերու հաւաքման: Ո՛չ անոնցմէ ապահովելիք շահս զիս կը գրաւէր, ո՛չ ալ անոնց հազուագիւտ ըլլալը: Ինչ որ զիս կը հրապուրէր անոնց տեսքն էր ու այլազանութիւնը: Ժամեր շարունակ կ'անցընէի զննելով այս կամ այն երկրի քաղաքները, բնական տեսարանները, արտածուած արտադրութիւնները եւ երաժշտական գործիքները:

### Հնչիւններ երաժշտութեան մէջ

Այժմ անցնիք երաժշտական տիեզերքին, որ առանց այլեւայլի, կը կազմէ Պր. Սիմսարի մէկ ուրիշ նախասիրութիւնը: «Ես սիրահար մըն եմ դասական երաժշտութեան եւ յատկապէս օփերայի: Երգած եմ 30-է աւելի օփերաներու երգչախումբերուն մէջ: Այսպէս, միաձուլելով երկու նախասիրութիւններս, սկսայ յայտնաբերել երգահաններ, որոնց անունը կ'անգիտանայի, հեռաւոր երկիրներու երաժշտական գործիքներ, ազգային քայլերգներ եւ այլն...»: Ընդարձակ հաւաքածոյ մը, որուն վրայ կու գան աւելնալ դրոշմաթղթային իրեր, կնիք-

ներ, ինքնուրոյն դրոշմներ, ինչպէս նաեւ Սալգապուրկի եւ Պայրըթի արձատրիական եւ գերմանական երգահանդէսներուն վերաբերեալ տոմսակներ, ծանուցումներ եւ յայտագրեր: Հետամուտ ըլլալով յստակութեան, Արա Սիմսար, որ այսօր բաւական խորացած է իր ուսումնասիրութեանց մէջ, կատարած է հետեւեալ դասաբաժանումները. «Նամականիշերս դասաւորած եմ իրենց ներկայացուցած նիւթին համաձայն»,- կ'ըսէ ան:

1. Երգահաններ
2. Համբաւաւոր անձեր, որոնց զլխաւոր զբաղումը երաժշտութիւնը չէ
3. Երաժշտական գործիքներ
4. Ազգային քայլերգներ
5. Օփերայի շէնքեր
6. Դասական երաժշտութենէ եւ օփերայէ անջատ եղանակներ
7. «Պալէ»ներ եւ այլ պարեր
8. Դասական եւ թեթեւ երաժշտութեանց մրցոյթներ եւ երգահանդէսներ
9. Նկարներ, որոնց նիւթը երաժշտութիւնն է
10. Եւ վերջապէս նամականիշեր, որոնք կը պատկերացնեն որոշ փողային գործիք մը:

Արա Սիմսար ճամբորդած է աշխարհի չորս կողմը եւ հանդիպում ունեցած բազմաթիւ դրոշմագետ գործակիցներու, անհատներու եւ ընկերակցութիւններու հետ, որոնց շնորհիւ ճոխացուցած է իր հաւաքածոն: «Համալսարանական ուսումս աւարտելէ յետոյ, քանի մը տարի աշխատած եմ Ժընեւ՝ David Feldman SA



2004 Սան Մարինո  
(Լա Սքալա, օբերա)



1999 Սան Կղիզի  
(Պի ճիսերը)



1969 Լաոս  
(Արքայական պալատ)

աճուրդի վաճառատունը, որուն համար այցելած եմ միջազգային դրոշմաթղթային ցուցահանդեսներ, ինչպէս London 80, WIPA 80 եւ Philexfrance: Աւելին, կը յարէ Արա Սիմսար. «Անդամ եղած եմ բազմաթիւ միջազգային դրոշմաթղթային մասնագիտացած կազմակերպութիւններու, որոնցմէ՝ ATA (Ա.Ս.Ս.), CIFT (դրոշմաթղթային իտալական ընկերակցութիւն), PMC (Լոնտոնի դրոշմաթղթային երաժշտական ակումբ), ինչպէս նաեւ գերմանական «Motivgrupe Music» ընկերակցութեան: Այս վերջինը՝ գերմաներէն, ֆրանսերէն եւ անգլերէն լեզուներով պարբերաբար մը կը հրատարակէ «Der Musicus» անունով, որ տեղեկութիւններու անհատում աղբիւր մըն է»:

Եթէ Արա Սիմսար կը խոստովանի, թէ բնաւ մրցոյթի կամ ցուցահանդեսի չէ մասնակցած, պատճառը այն է, թէ ան աւելի հաւատք կ'ընծայէ «դրոշմաթղթային հանդիպումներուն»: «Ես թղթակիցներ ունիմ բոլոր ցամաքամասերուն վրայ, որոնց հետ փոխանակումներ կ'ընեմ բազմաթիւ տարիներէ ի վեր: Օրինակի համար, տանը մարքացի թղթակցիս հետ փոխանակումներ կ'ընեմ 1986-էն ի վեր: Զիչ անգամ կը գնեմ վաճառականներէ եւ

պատահականօրէն՝ աճուրդներէ կամ ցուցահանդեսներէ, սակայն երբեք համացանցի միջոցաւ: Կանոնաւորապէս կը կարդամ մասնագիտական որոշ հրատարակութիւններ եւ այսպիսով կը ծանօթանամ բազմաթիւ երկիրներու մէջ շրջաբերութեան դրուած նոր սամականիշերու»:

Մասնաւոր, Արա Սիմսար կը հաւատայ որ դրոշմագիտութիւնը կը նպաստէ գիտելիքներու զարգացման բազմաթիւ մարզերէ ներս: «Օրինակի համար ֆիլիանտաքի թղթակցիս թէ՛նաբան է եւ գաղթող որոշ տեսակի թռչուններու ուղղութիւնները ցոյց տուող քարտէսներ կը պատրաստէ: Զիլիցի թղթակցիս կը հաւաքէ «cactus»-ի ընտանիքէն բոյսեր եւ զանազան ժողովուրդներու բարբերն ու սովորութիւնները ներկայացնող սամականիշեր: Նոր Չեխոստացի գործակցիս կը հաւաքէ Եւրոպայի հետ առնչուող նիւթեր: Ես միշտ կը փնտռեմ գործակցներ, որոնք կրնան ինծի հայթայթել յատկապէս՝ Ափրիկեան, Լատին Ամերիկեան կամ Ասիական որոշ երկիրներու սամականիշեր»:

Թրգմ. Անայիս Ծիգմեճեան



1910 Պալարիա  
(Վակնթի եւ Սոցարդի փառատուն)



1964 Գոնկոյի  
Զանրապետութիւն  
(Փող, Փոստային  
հորիզոնական)



## ԻՐԱՆ ԿԸ ՊԱՏՈՒԷ ԱՌ-ԱՋԻՆ ԿԻՆ ԱՍՏՂԱԳԷՏ, ԲՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՓՐՈՖԷՍՈՐ ԱԼԵՆՈՒՇ ՏԷՐԵԱՆԸ



Ալելի քան հարիւր հոգի հաւաքուած էին Թեհրանի մէջ, տօնելու համար Իրանի առաջին կին աստղագետ եւ բնագիտութեան փրոֆեսոր Ալենուշ Տերեանի 90 ամեակը:

Իրանահայ գիտնակաւոր պատուուած էր Իրանի մայրաքաղաքին մէջ, 9 Նոյեմբեր 2010-ին կայացած արարողութեան մը ընթացքին, ուր ներկայ եղած են իրանական խորհրդարանի (մաճլիս) անդամներ եւ 100-է ալելի հայեր, որոնք իրենց գնահատանքը յայտնած են Տերեանին:

Այս առիթով խորհրդարանի անդամ Զասսան Ղաֆուրիֆարոս՝ որ եղած է Տերեանի նախկին ուսանողը, Թեհրանի համալսարանին մէջ, յիշեց թէ «ան միշտ կ'ըսէր որ ունի աղջիկ մը Արեւ անունով եւ մանչ մը Լուսին անունով»:

Նշեալ արարողութեան ընթացքին կարդացուեցաւ նաեւ Տերեանի տարեդարձը շնորհաւորող Թեհրանի առաջնորդ Սեպուհ Արքեպիսկոպոս Սարգիսեանի ուղերձը:

Տերեան ծնած է 1920-ին թեհրանահայ ընտանիքի մը մէջ, եւ 1947-ին աւարտած է Թեհրանի համալսարանի բնագիտութեան ճիւղը:

Աւարտելէ ետք սկսած է աշխատիլ համալսարանին բնագիտական գիտաշխատանոցներուն մէջ եւ նոյն տարին նշա-

նակուած է անոնց գործողութիւններուն գլխաւոր պատասխանատուն:

Ան իր ուսումը շարունակած է Փարիզի Սորպոնի համալսարանին մէջ, ուրկէ շրջանաւարտ եղած է 1956-ին, մասնագիտանալով մթնոլորտային բնագիտութեան մէջ եւ վերադարձած է Իրան՝ աշխատելու իբրեւ օգնական դասախօս Թեհրանի համալսարանի ջերմութային (thermodynamics) ճիւղին մէջ:

Տերեան քառամսեայ կրթաթոշակի մը արժանանալով Գերմանիոյ մէջ հետեւած է արեգակնային բնագիտութեան դասընթացքի մը, որմէ յետոյ ան 1964-ին կը դառնայ Իրանի առաջին կին բնագիտութեան դասախօսը:

1966-ին Տերեան եղած է Թեհրանի համալսարանին երկրաբնագիտական (geophysics) յանձնախումբի անդամ եւ երեք տարի վերջ ընտրուած է արեգակնային բնագիտութեան (solar physics) ուսումնասիրութեան գլխաւոր ղեկավար:

Ան եղած է Թեհրանի համալսարանի երկրաբնագիտական հիմնարկի արեգակնային դիտարանին (solar observatory) հիմնադիրներէն մին, ուր աշխատած է մինչեւ 1979, իր հանգստեան կոչուիլը:

**Ալենուշ Տերեան մահացաւ 5 Մարտ 2011-ին:**

«Տ»





## **ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ ՀԲԸՄ-Ի ՍԱԹԵՆԻԿ ԶԱԳԸՐ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԻՆ ՄԷՋ**

Հայոց ցեղասպանության 96-ամեակին առիթով, ՀԲԸՄ-ի Գահիրեի Մասնաճիւղի Վարչութիւնը կազմակերպեց վաւերագրական 4 ժապաւեններու ցուցադրութիւնը եւ ներկայացումը:

Շաբաթ 16 Ապրիլին, ՀԲԸՄ-ի Գահիրեի մասնաճիւղի ատենապետ Տոքթ. Վիզէն Ճիզմէճեանի բացման կարճ խօսքէն ետք, երեկոյեան ժամը 8:30ին, ցուցադրուեցան կարճմետրած 3 ժապաւեններ, որոնց ներկայացումը յաջորդաբար կատարեցին օրիորդներ Տոքթ. Անի Օհաննեսեան, Ռուբինա Ասլանեան եւ Արփի Խաչերեան:

Առաջինը՝ սեւով ճերմակ, 23 վայրկեանոց, հազուագիւտ մունջ ժապաւեն մըն էր «Հոգիներու Աճուրդ»ը, (The Auction of Souls) արտադրուած 1918ին Metro Goldwyn Mayer-ի կողմէ եւ սակայն յայտնաբերուած եւ վերականգնուած էր 2009-ին: Նիւթը՝ եղեռնէն վերապրածի մը իսկական պատմութիւնն է, հիմնուած՝ Արշալոյս Մարտիկեանի «Բռնաբարուած Հայաստան» հատորին վրայ, որ կը պարփակէ հայկական ցեղասպանութեան շրջանին հեղինակին ականատեսի վաւերագրական վկայութիւնները, որոնք մանրամասնօրէն կը նկարագրեն այդ շրջանին իր կրած ահարկու, տառապալից ապրումները:

Երկրորդ ժապաւենը, 30 վայրկեան տեւողութեամբ, անգլերէն վաւերական ներկայացում մըն էր հայկական ցեղասպանութեան ամենակարեւոր վկաներէն մէկուն, գերմանական բանակի սպայ՝ Արմին Վէկների կեանքին, յուշերուն եւ մասնաւորաբար մեծ եղեռնին հետ առնչուող նկարներու իր հաւաքածոյին, որոնք անժխտելիօրէն կը փաստեն թուրքերուն կողմէ կատարուած ցեղասպանութիւնը:

Օրուան պատկերասփռուած վերջին ժապաւենը, 12 վայրկեան տեւողութեամբ, վաւերական պատմութիւնն էր «Նիքր Իսթ Ռիլիֆ» հիմնարկութեան եւ անոր ծագումին: Ան հիմնուած էր օժանդակելու նպա-

տակաւ ցեղասպանութենէն վերապրողներուն եւ մասնաւորաբար որբերուն:

ՀԲԸՄ-ի Գահիրեի Մասնաճիւղի ատենապետ Տոքթ. Վիզէն Ճիզմէճեանի բացման կարճ խօսքէն ետք, Շաբաթ 30 Ապրիլ 2011ին, երեկոյեան ժամը 8:30ին, ցուցադրուեցաւ հայոց ցեղասպանութեան հետ առնչուող ժապաւեններուն չորրորդը՝ «Աղէտ», ցեղասպանութիւն մը» 90 վայրկեան տեւողութեամբ, Ֆրանսերէնով եւ անգլերէն գրաւոր թարգմանութեամբ:

Այս առիթով, Չագըր մշակութային կեդրոնը ամբողջութեամբ լեցուն էր, մօտաւորապէս 50 հոգի որոնք եկած էին ոգեկոչելու եղեռնի զոհերուն յիշատակը: Ուրախալի էր խումբ մը հետաքրքիր օտար պատանիներու ներկայութիւնը, որոնք եկած էին իրենց բարեկամներուն հրաւերով:

Այս փաստագրական ժապաւենը որուն բեմադրիչն է գերմանացի Էրիք Ֆրիտլըր, արտադրուած է 2010ին, Գերման Ազգային հեռատեսիլին կողմէ: Ան բացառիկ արժէք կը ներկայացնէ տրուած ըլլալով որ հիմնուած է ճշգրիտ արխիւային փաստաթուղթերու եւ պատմական աղբիւրներու վրայ, որոնք առնուած են գերմանացի, ամերիկացի, զուիցերիացի, շուէտացի եւ այլ ազգերու ականատեսի վկայութիւններէն:

Ցեղասպանութեան եղելութիւնը փաստող այս ժապաւենը, կը հակազդէ զայն ուրանալու թրքական կառավարութեան տարած միջազգային պայքարին եւ լոյս կը սփռէ այդ ուրացումին ետին պահուած քաղաքական դրդապատճառներու վրայ:

Այս ժապաւենը առաջին անգամ հեռասփռուած է Ապրիլ 2010ին, Գերմանական Ազգային հեռատեսիլէն (NRD) եւ արժանացած մրցանակի որպէս 2010ի լաւագոյն վաւերագրական ժապաւենը: Ան հեռասփռուեցաւ նաեւ այս տարի, Ապրիլ 20-ին Ֆրանսական (ARTE) կայանէն:

Թրգմ. Ա.Ճ.



# ՅԱԲԵԼԵԱԿ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԲԸՄ-Ի ՄԱԹՆԵԻԿ ԶԱԳԸՐ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԻՆ ՄԷՋ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԺՊԱԿՆԵՆՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ պատրաստեց՝ Արփի Խաչերեան

Եղեռնի 96ամեանին ՀԲԸՄ-ի Սաթենիկ Չազըր Կեդրոնէն ներս ներկայացուած ժապաւեններուն առաջին երեկոն տեղի ունեցաւ 16 Ապրիլին, որուն բացման խօսքը կատարեց Տոքթ. Վիգէն Ճիգմեճեանը: Յուցադրուեցան երեք կարճ ժապաւեններ: Մասնաճիւղի վարչութեան օժանդակ անդամուհի Տոքթ. Անի Օհաննեսեան ներկաներուն գաղափար մը տուաւ երեկոյին առաջին ժապաւենին մասին, որ կը կոչուէր «Հոգիներու Աճուրդ»: 15-վայրկեանսոց ժապաւենը կ'ընդգրկէր տեսարաններ 1918 թ. պատրաստուած սել-ճերմակ մունջ ժապաւենէն, որ ափսոս հրդեհի մը պատճառաւ կը վնասուէր:

Ժապաւենը կը ներկայացնէ Արշալոյս կամ Օրորա Մարտիկանեանի յուշերը արտորի ճանապարհին վրայ, որ ան պատմած էր «Յօշոտուած Հայաստան» յուշագրական գիրքին մէջ: Արշալոյս անձամբ կը կատարէ ժապաւենին գլխաւոր դերը, բեմադրութեամբ Օսկար Ապֆելի: Ժապաւենին կ'ընկերակցի Լորիս Ճգնաւորեանի երկրորդ համանուագը, որ նուիրուած է Յեղասպանութեան յիշատակին:

Երկրորդ ժապաւենը ներկայացուց ՀԲԸՄ-ի Գահիրէի Մասնաճիւղի վարչութեան օժանդակ անդամուհի Օր. Ռուբինա Ասլանեանը: Ժապաւենը նուիրուած էր Գերմանացի սպայ և լուսանկարիչ Արմին Վեկների յիշատակին:

Վեկներ լուսանկարած է

Եղեռնի ողբերգութիւնը իր կեանքը վտանգի ենթարկելով: Վեկների նկարները առաւել ապացոյց մըն են Յեղասպանութեան տարողութեան մասին: Վեկներ պայքարեցաւ հայերու իրաւունքներուն համար:

Որպէս օրինակ նշենք անոր վկայութիւնը Սողոմոն Թեւիլիբեանի դատավարութեան ընթացքին:



Մինչև իր մահը՝ 1978-ին, Հռոմի մէջ Վեկներ շարունակեց պաշտպանել հայերու և այլ փոքրամասնութիւններու իրաւունքները: Ժապաւենը կ'ընդգրկէ Վեկների նկարները և վկայութիւնները:

Երեկոյթին երրորդ ժապաւենը, Lest They Perish կամ «Որպէսզի չի Կորուին» փաստագրական պատառիկ մըն էր Near East Relief-ի մասին:

Այս ժապաւենը պատրաստած են Չարեհ և Ալիսա Ճգնաւորեանները: Անոնք հաւաքած են նկարներ, հարցազրոյցներ, ակաւնատեսներու վկայութիւն-





ներ, դրամահաւաքի գովազդներ և այլ փաստաթուղթեր:

Near East Relief հիմնուած է Սեպտեմբեր 16, 1915-ին, իբր հետեւանք Հայոց Ցեղասպանութեան: Ամերիկայի Միացեալ Նահանգներու Թուրքիոյ այդ օրերու դեսպան Henry Morgenthau կը խնդրէ իր կառավարութենէն որ շուտով օգնութիւն հասցնէ Օսմանեան Կայսրութեան մէջ գտնուող անպատսպար հայ գաղթականներուն:



պաւելը պատրաստած է գերմանական պետական հեռուստակայանը: Ժապաւելը գրած է և բեմադրած գերմանացի Էրիկ Ֆրիտլերը: Ժապաւելը ստացած է ԱտուՖ Կրիմէի անուան առաջին մրցանակը մշակոյթի և տեղեկատւութեան մէջ: Ֆրիտլեր կ'օգտագործէ ամերիկացի և եւրոպացի դիւանագետներու և նուիրեալներու վկայութիւնները ինչպէս նաև հայ

վերապրողներու փորձառութիւնները: Ան այս վկայութիւնները կեանքի կը կոչէ երբ դերասաններ կը նշանակէ որոնք կ'արտայայտեն անոնց խօսքերը: Ֆրիտլեր նոյնպէս մէջբերումներ կ'ընէ փաստաթուղթերէ, արխիւային նիւթերէ և վաւերագրական լուսանկարներէ: Ժապաւելի աւարտին դիտողները անկասկած համոզուած կ'ըլլան թէ, 1915-ի կատարուած դէպքերը ցեղասպանութիւն են:

Ամերիկացի նուիրեալներ արագ գործի կ'անցնին և մի քանի ամիսէն 50-է աւելի Near East Relief-ի կեդրոններ կը հաստատեն Կիլիկիոյ, Արեւմտեան Հայաստանի, Միջին Արեւելքի և այլ շրջաններու մէջ: Near East Relief եղաւ օրինակ այլ մարդասիրական կազմակերպութիւններու: Շնորհիւ Near East Relief-ի նուիրեալներուն հարկը հազարաւոր հայ կեանքեր փրկուեցան:

Վերջին երկու ժապաւելները հանրութեան ներկայացուց ՅԲԸՄ-ի Գահիրէի Մասնաճիւղի օժանդակ անդամ Արփի Խաչերեանը:

«Աղետ: Ցեղասպանութիւն մը» տեսաժապաւելը ցուցադրուեցաւ Ապրիլ 30-ին:

«Աղետ» փաստագրական ժապաւելը լոյս աշխարհ եկած է Պեռլինի մէջ Ապրիլ 8, 2010-ին: Ան կը ներկայացնէ Հայոց Ցեղասպանութիւնը օտար տեսանկիւնէ: Ժա-

ճարքին վերջին ժապաւելին ցուցադրուած Շաբաթ, 14 Մայիսին, կ'անդրադառնանք յաջորդ թիւով:





## **ՀԱՐՄ-Ի ԵՐԿՈՒ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ ԿԻՐԱԳՈՐԾԵՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏԱԾ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ**

12րդ տարին ըլլալով ՀԱՐՄ-ի Լոս Անճելըսի Մանուկեան ՏԵՄԻՐՃԵԱՆ վարժարանը եւ Պուէնոս Այրեսի ՀԱՐՄ-ի Մարի Մանուկեան հիմնարկը սկսած են աշակերտական փոխանակման ծրագիր մը: Այս կրթական ծրագիրը կը նախատեսէ տարբեր երկիրներու հայ երիտասարդները իրարու մօտեցնել եւ ներկայացնել անոնց՝ հայերը իրարու կապող հասարակաց արժէքները:

Ծրագրի համադրող Միրիամ Թապաքեանը առաջնորդեց 17 հոգինոց արժանթինցիներու խումբը, որ հասաւ Գալիֆորնիա մասնակցելու Մանուկեան - ՏԵՄԻՐՃԵԱՆ Վարժարանի ուսուցիչներուն կողմէ պատրաստուած ճոխ եւ այլազան ուսումնական ծրագրին: Այցելու աշակերտները մասնակցեցան դասընթացքներու ինչպիսին են անգլերէն խօսակցութիւն, քերականութիւն եւ գրել, հայերէն, արուեստ, համակարգիչ, պար եւ մարզանք: Անոնք այցելեցին նշանաւոր տեսարժան վայրեր, ինչպէս Տիգրանաւան, Եոնիվորսըլ Սթիւտիօզ, Նորթըն Սայմըն թանգարան եւ Մափիք Մաունթընզ: Այցելեցին նաեւ ՀԱՐՄ-ի Վաչէ եւ Թամար Մանուկեան Երկրորդական Վարժարանը: Խումբը այցելեց նաեւ Արեւմտեան Թեմի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին եւ հանդիպում ունեցաւ Առաջնորդ Յովնան Արք. Տերտրեանի հետ:

Երեք շաբթուան այցելութիւնը պսակուեցաւ մրցանակներու բաշխման արարողութեամբ, առաջնորդութեամբ տնօրէն Յակոբ Յակոբեանի, փոխ տնօրէն Անահիտ Նալպանտեանի եւ ծրագրի համադրող Վարդուհի Գոճայեանի: Մրցանակաբաշխութենէն առաջ Մարի Մանուկեան հիմնարկի աշակերտները ներկայացուցին «Քոչարի» պարը: Բարի երթի ձեռնարկին ընթացքին Մանուկեան - ՏԵՄԻՐՃԵԱՆ վարժարանի գործարար տնօրէն Լեւոն Բէշիշեան յիշեցուց աշակերտներուն այն պատգամը որ գետեղուած է ՀԱՐՄ-ի քայլերգին մէջ, ան այսպէս սկսաւ իր խօսքը. «Սիրելի աշակերտներ Լոս Անճելըսէն եւ Պուէնոս Այրեսէն, նայեցէ՛ք ձեր շուրջը, հոս այս երեկոյ եւ պիտի տեսնէք թէ որքան ճիշդ են մեր սիրելի ՀԱՐՄ-ի քայլերգին բառերը: Դուք բոլորդ լաւ լուրեր էք, այլեւս չկայ վիշտ, Դուք նոր արեւն էք որ բարձրացած է մեր ազգին վրայ, Դուք ու մենք ձեռք ձեռքի կը կառուցենք մեր ազգը եւ կը ստեղծենք նոր փոխյարաբերութիւններ»: 21 ուսուցողական եւ զուարճալի օրերէ ետք, աշակերտները վերադարձան իրենց տուները՝ Պուէնոս Այրես, բաժնելէ վերջ իրենց հիւրընկալ աշակերտներուն եւ անոնց ընտանիքներուն հետ ամբողջ կեանքի ընթացքին չմոռցուող փարձառութիւն մը:

2012-ի ամբան, ՀԱՐՄ-ի Մանուկեան-ՏԵՄԻՐՃԵԱՆ Վարժարանի աշակերտները փոխադարձաբար պիտի այցելեն Պուէնոս Այրեսի ՀԱՐՄ-ի Մարի Մանուկեան հիմնարկը ուր պիտի վայելեն իրենց ընկերներուն հիւրասիրութիւնը:



## **ՀԱՐՍ ՆՈՒՊԱՐ**

# **ԳԱՀԻՐԷԻ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ 12 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ ՏՂՈՑ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԽՈՒՄԱՐԸ ԿԸ ՄԱՍՆԱԿԵՑԻ ՀՔԸՄ-ԱՐԱՐԱՏԻ ԵՒ Ս. ԹԵՐԵԳՎՅԻ ՄՐՑԱՇԱՐ-ՔԵՐՈՒՆ**



Օհան Յանիկյան

Գահիրեի ՀՄԸՄ-ՆՈՒՊԱՐԻ 12 տարեկան էՆ ՎԱՐ տղոց խումբը, 15-ԷՆ 19 Փետրուար 2011ին, մասնակցեցաւ ՀՄԸՄ-Արարատի կազմակերպած Ֆութպոլի մրցաշարքին, որուն մասնակցեցան հետեւեալ 5 խումբերը. H.O.C., El-Dar, Գահիրեի ՀՄԸՄՆՈՒՊԱՐ, յունական PAOK եւ հիւրընկալ խումբը՝ ՀՄԸՄ-Արարատ: Գահիրեի ՀՄԸՄ-ՆՈՒՊԱՐԻ տղոց մրցումը ընդդէմ PAOK ի վերջացաւ հաւասար արդիւնքով 1-1, մինչ անոնք յաղթընէցան «HOC»-է 0-4, «Էլ-Տար»-է 2-3, ՀՄԸՄ-Արարատէ 1-2: Տուեալ արդիւնքներով մրցաշարքին ախոյեան հանդիսացաւ «HOC» խումբը իսկ Գահիրեի ՀՄԸՄ-ՆՈՒՊԱՐԻՆ գրաւեց 4-րդ դիրքը:

Մրցաշարքը բացառիկ առիթ մըն էր պատանիներուն համար ի մի հաւաքուելու եւ զուարթ մթնոլորտի մը մէջ խաղալու իրենց նախասիրած մարզախաղը՝ Ֆութպոլը: Տրուած ըլլալով որ այս մրցաշարքը «Պաշտօնական» բնոյթ ունէր, անոնք աւելի կարեւորութիւն կու տային անոր եւ աւելի կեդրոնացած ու խանդավառութեամբ կը խաղային:

Զորեքշաբթի 23 Փետրուարին, Գահիրեի ՀՄԸՄ-ՆՈՒՊԱՐԻ 12 տարեկան էՆ ՎԱՐ տղոց նոյն խումբը մասնակցեցաւ Ս.Թերեգայի մրցաշարքին եւ հանդիսացաւ մասնակցող 3 խումբերուն երկրորդը:

Առաջին մրցումին, անոնք պարտութեան մատնեցին «Ard-El-Golf»-ը 4-0 արդիւնքով, սակայն երկրորդին՝ 1-5 արդիւնքով պարտընէցան զիրենք հիւրընկալող Ս.Թերեգայի խումբէն:

Գահիրեի ՀՄԸՄ-ՆՈՒՊԱՐ խումբին խաղացողները հետեւեալներն էին:

Հարի Սուլթանեան ( մբապետ) Ժիրայր Գարակեօգեան, Յակոբ Պալթայեան, Ժորժ Արամ Աբիկեան, Նուպար Սիմոնեան, Արմէն Աբգարեան, Սերժ Գըլլոյեան, Ռաֆֆի Մոսաատ, Մաքսիմ Զեհեայեան, Արեգ Սիմոնեան, Ալեքս Եանի:

Խումբի վարիչ՝ Captain Dory Abdel Salam:

Խումբի ղեկավար՝ Ճորճ Սիմոնեան:

Թրգմ. Ա. Ճ.



Օհան Յանիկյան



## ԳԱՀԻՐԷԻ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ԳՆԴԱՄՈՒՂԻ 10-ՐԴ ՄՐՑԱՇԱՐՔԸ

27 Փետրուար 2011ին, տեղի ունեցաւ Գահիրէի ՀՄԸՄՆՈՒՊԱՐԻ կազմակերպած գնդամուղի 10-րդ մրցաշարքը, որուն ախոյեան հանդիսացաւ Արմէն Վարժապետեան, բարձր մակարդակի, հետաքրքրաշարժ եւ աշխոյժ խաղարկութենէ մը վերջ՝ պարտութեան մատնելով Զրիս Սիմոնեանը 3-1 արդիւնքով:

Նոյն օրը տեղի ունեցած կիսաաւարտական մրցումներուն, Արմէն Վարժապետեան պարտութեան մատնած էր նաեւ 2010-ի ախոյեան՝ Գեորգ Սագայեանը:

2009-ի ախոյեան՝ Արմէն Վարժապետեան 3-րդ անգամ ըլլալով կը տիրանար ակումբիս կազմակերպած գնդամուղի մրցաշարքի բաժակին: Ան՝ սկիզբէն մինչեւ վերջին հանգրուանը, խաղաց ինքնավստահութեամբ եւ անսպառ կորովով:

Այս տարուան գնդամուղի մրցաշարքին յայտնութիւնը եղաւ Զրիս Սիմոնեան: Ան հաստատ քայլերով, անվրէպ, հասաւ մինչեւ

չեւ աւարտական, պարտութեան մատնելով խորէն Գալընեանը, Ժիրայր Տեփոյեանը, Նուպար Գույումճեանը եւ Արթո Միսքճեանը: Արդարեւ դժուարին պայքարի ուղի, որ կը ցուցաբերէ աւարտականին հասնելու իր աննկուն կամքը:

Մրցաշարքերու 10 տարուան ընթացքին, Արմէն Վարժապետեանի կողքին, Գեորգ Սագայեան ախոյեան հանդիսացած է 4 անգամ, մինչ Յակոբ Գալիշեան որ անհանգստութեան պատճառաւ ստիպուած եղած էր քաշուիլ աւարտականի վերջին քառորդին՝ 3 անգամ: Իր բացակայութիւնը շատ զգալի եղած է այս տարուան աւարտականի մրցումներուն: Ուրախ ենք որ ան այժմ աւելի լաւ է եւ կը բոլորէ ապաքինման շրջան մը:

Յիշենք որ այս տարուան մրցաշարքին բաժակը նուիրած էին Տէր եւ Տիկին Նուպար Գույումճեան:

Թրգմ. Ա. Ճ.



# ԱՆԴԱՄԱԿԱՆ

## ՄԱՅԱԳՐՈՒԹԻՒՆ



Անհուն ցաւով կը գումթենք մահը Գահիրէի Պատկառելի Թեմական Ժողովի երկարամեայ ատենապետ, ԶԲԸՄ-ի Գահիրէի Մասնաճիւղի վաթսունամեայ անդամ, Տիար Անդրանիկ Մետրոպէանի, որ պատահեցաւ 26 Մարտ 2011-ի առաւօտեան:

Այս տխուր ու անակնկալ մահուան առթիւ «Տեղեկատու» իր խոր վշտակցութիւնը կը յայտնէ հանգուցեալին այրիին Տիկին Նուարդի, դուստրերուն՝ Տիկիններ Տիանայի, Սիւզիի, Տէր եւ Տիկին Ռաֆֆի եւ Լիլիան Փափազեաններուն, թոռներուն եւ բոլոր հարազատներուն:

Թող հանգուցեալին բարի յիշատակը սփոփէ իր հարազատները:

« S »

